Azg
armenian daily
24 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2003 ՇԱԲԱԹ 172 (2857)

Օսկանյան-Գյուլ հանդիպումը՝ վաղը

երեկ հրավիրված մամլո ասուլիսում, որի այլ մանրամասնություններին կարելի է ծանոթանալ 2-րդ էջում, ՀՀ նախագահի մամլո քարտուղար Ա. Քոչարյանն անդրադարձավ նաեւ Թուրքիա-Հայաստան սահմանի վերաբացման հնարավորության մասին շրջող լուրերին ու ենթադրություններին: «Հայ-թուրքական սահմանի բացման հնարավորությունը դրական ենք գնահատում, ասաց Ա. Քոչարյանը: Սակայն, ավելացրեց նա, միեւնույն ժամանակ թերահավատ ենք: Այս հարցի շուրջ շատ ենթադրություններ ու բանավեճեր են եղել: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 58-րդ նստաշրջանի ընթացքում, սեպտեմբերի 25-ին, նախատեսված է Հայաստանի եւ Թուրքիայի արտաքին գործերի նախարարներ Վարդան Օսկանյանի եւ Աբդուլլահ Գյուլի երկրորդ հանդիպումը, որի արդյունքում գուցե նոր զարգացումներ լինեն»:

Ինչ վերաբերում է դարաբաղյան հակամարտության կարգավորմանը, ՀՀ նախագահի մամլո քարտուղարը, անդրադառնալով բանակցություններում ԼՂՀ մասնակցության հարցին, ասաց, թե ցանկալի է, որ ԼՂՀ-ը դառնա բանակցային կողմ, որի մասին հայտարարել էր ԵԱՀԿ Մինսկի խմբի ռուսաստանցի համանախագահ Յուրի Մերզլյակովը: «Ամեն դեպքում, ասաց Ա. Քոչարյանը, Հայաստանի ներկայությունը բանակցային գործընթացում առավել մեծ կշիռ եւ արդյունավետություն է տալիս դրան»:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Ինչ չափով ազատություն տալ ՁԼՄ-ին

Զսպաշապի՞կ, թե՞ ժողովրդավարության հագուստ հագցնել նրան

ԿԱՐԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Ինչպես եւ սպասվում էր, երեկ ԱԺ-ում բուռն ենթարկվեց ընթացավ ՁԼՄ օրենքի նախագծի շուրջ: Արդարադատության փոխնախարար Աշոտ Աբովյանը ներկայացրեց օրենսդրական փաթեթը եւ դրանում հնարավոր փոփոխությունների կատարման ընթացքը: Նա հավաստեց, որ լրագրողական կորպուսի եւ նախագծի այլ ընդդիմադիրների առաջարկությունները առաջին ընթերցումից երկրորդ ընթերցումն ընկած ժամանակահատվածում անպայման կքննարկվեն: Ընդդիմադիր պատգամավորների հակափաստարկն այն էր, որ ենթադրվելիք այդ փոփոխություններն արդեն իսկ պիտի լինեին փաթեթում, եւ ոչ թե հենց այս պահին վերացական երաշխիքներ տրվեն դրանց վերաբերյալ: Այլապես անիմաստ է քննարկման դնել նախագիծը եւ անցկացնել առաջին ընթերցմամբ: Աշոտ Աբովյանը, հակառակը, համոզված էր, որ ընդդիմության եւ լրագրողական կորպուսի առաջադրած սրբագրումներն այնքան լուրջ չեն, որ



օրինագծի տարալման պատճառ դառնան: ԱԺ փոխնախագահ Վահան Հովհաննիսյանը հնարավոր փոփոխությունների քննարկման վերաբերյալ կառավարության ներկայացուցչի համաձայնությունը պարզապես «բարյացակամություն» որակեց, որովհետեւ «ՄԱԱ-ն օրենսդրական նախաձեռնության իրավունք չունի, եւ եթե կա էլ այլընտրանքային նախագիծը, ապա պիտի մինչ այժմ ներկայացված լիներ ԱԺ-ին»:

Տես էջ 2

ՌՈՒՍԱՍՏԱՆ-ՄԱԿ-Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐ

Վլադիմիր Պուտինը 5-օրյա պաշտոնական այցով ԱՄՆ-ում

ՄՈՍԿՎԱ, 23 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինն այսօր հնգօրյա պաշտոնական այցով մեկնում է ԱՄՆ: Պուտինի այցի առաջին մասը կընթանա Նյու Յորքում, որտեղ ծրագրված են Ռուսաստանի նախագահի հանդիպումները ԳՖՀ-ի կանցլեր Գերհարդ Շրյոդերի եւ Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակի, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Քոֆի Անանի ու այլ ղեկավար անձանց հետ: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի նիստում ՌԴ նախագահի ելույթը ծրագրված է սեպտեմբերի 25-ի առավոտյան:

Սեպտեմբերի 26-ի երեկոյան Վլադիմիր Պուտինը կժամանի Վաշինգտոն եւ նույն օրը Քեմփ Դեյվիդում կսկսվեն նրա բանակցությունները Ջորջ Բուշի հետ: Պուտինի եւ Բուշի երկօրյա բանակցություններն ընթանալու են տարբեր ֆորմատներով:

«Ազգ»-ի կողմից ավելացնենք, որ նախագահ Պուտինի շքախմբում է Ռուսաստանի հայերի միության նախագահ, հայտնի գործարար եւ բարերար Արա Աբրահամյանը:

Ալեքսանդր Կվասնեւսկին Ռոբերտ Քոչարյանին հրավիրել է Լեհաստան

Նախագահ Ռոբերտ Քոչարյանին իր հավատարմագրերն է հանձնել Հայաստանում Լեհաստանի նորանշանակ դեսպան Վիկտոր Ռոսսը (նստավայրը՝ Երեւան):

Ինչպես տեղեկացնում է ՀՀ նախագահի մամլո գրասենյակը, դեսպանը Ռոբերտ Քոչարյանին հանձնել է Լեհաստանի նախագահ Ալեքսանդր Կվասնեւսկու հրավերը՝ պաշտոնական այց կատարելու Լեհաստան:

Շնորհավորելով դիվանագետին, Ռոբերտ Քոչարյանն ընդգծել է, որ Հայաստանն արտաքին քաղաքականության հայեցակարգում Լեհաստանի հետ հարաբերություններին մեծ տեղ է հատկացնում՝ որպես Արեւելյան Եվրոպայում առանցքային դերակատարություն ունեցող երկրի:

Նախագահը եւ դեսպանը քննարկել են հայ-լեհական երկկողմ հարաբերությունների զարգացման հեռանկարը: Գոհունակությամբ նշելով երկու երկրների քաղաքական փոխգործակցության բարձր մակարդակը, կողմերն ընդգծել են, որ անհրաժեշտ է ակտիվացնել առեւտրատնտեսական կապերը:

Դեսպան Վիկտոր Ռոսս

Նաղդալյանի գործով դատավարությունը անթիվ հուշարարներ ունի

Ամբաստանյալ Գրիգոր Պետրոսյանը չգիտեր ում լսել

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Նորքի դատարանի շենքում երեկ շարունակվեց Տիգրան Նաղդալյանի սպանության դատաքննությունը: Նախ Տիգրան Նաղդալյանի քույր Կարինե Նաղդալյանն ընդգրկվեց դատավարության մեջ որպես տուժողի իրավահաջորդի շահերի ներկայացուցիչ: Այնուհետեւ դատարանում արդեն ցուցմունք տված Գեղամ Շահբազյանի ցուցմունքների կապակցությամբ միջնորդություն եղավ դիտել վերջինիս ցուցմունքների տեսաձայնագրությունը: Բայց մինչ կնայեին հիշատակված տեսաերիզը, ամբաստանյալ Գեղամ Շահբազյանը հայտնեց, որ նախաքննության ժամանակ ինքն ինչ գրել է, հետո դա էլ ասել է:

Տեսաձայնագրության մեջ Գեղամ Շահբազյանը պատմում էր մեզ արդեն իսկ հայտնի իր ցուցմունքները: Մասնավորապես թե երբ եւ որտեղ է խոսվել պատվերի մասին, ով պետք է լիներ զոհը, ինչպես են հետեւել նրան եւ իրականացրել պատվերը:

Ըստ Հովհաննես Հարությունյանի (Ատեր) պատշտոնական Հոկտեմբեր Քարամյանի մեջբերած ցուցմունքի, որ Գեղամ Շահբազյանը տվել է ձայնագրման, հաջորդ օրն ամբաստանյալը հայտարարել է, որ իրեն սպանության պատվեր տվել է ոչ թե Ատերը, այլ Լյովա Հարությունյանը: Ամբաստանյալ Լյովա Հարությունյանի պաշտպան Վաղինակ Գեւորգյանը մեջբերեց նույն ցուցմունքի մեկ այլ հատված, որում Գեղամ Շահբազյանը նշում է, որ Լյովա Հարությունյանն ասել է մոռանալ իր առաջարկի մասին: Դրանից հետո, այսպես ասած, պատվիրատուի դերում հանդես է եկել Ատերը:

Երեկ դատարանը լսեց մեկ այլ ամբաստանյալի՝ Գրիգոր Պետրոսյանին:

Տես էջ 3

Վրաց-աբխազական բանակցությունները հետաձգվել են

ՍՈՒԽՈՒՄ, 23 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Անվտանգության եւ պատերազմի չվերսկսման երաշխիքների մշակման վերաբերյալ բանակցությունները Վրաստանի եւ Աբխազիայի միջեւ, որ ծրագրված էին սեպտեմբերի 23-ին Թբիլիսիում, տեխնիկական պատճառներով հետաձգվել են: Այս մասին «Ինտերֆաքսին» հայտնել է Աբխազիայի հանրապետության ԱԳՆ ղեկավար Սերգեյ Շամբան: Ըստ նրա, կոնսուլտացիաներից հետո կողմերը պայմանավորվել են բանակցությունները անցկացնել սեպտեմբերի 30-ին:

«Արմենտելի» հարցով եզրակացությունը կհրապարակվի 26-ին

ԵՐԵՎԱՆ, 23 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: «Արմենտել»-ի կողմից թիվ 60 լիցենզիայի խախտման կապակցությամբ ՀՀ կառավարության նախաձեռնությամբ անցկացված բաց ժողովի նախագահի եզրակացությունը կհրապարակվի սեպտեմբերի 26-ին: Այս մասին հայտնեցին ՀՀ Արժեթղթերի հանձնաժողովից:

Հայաստանի հեռահաղորդակցության բնագավառում մենաշնորհ ունեցող «Արմենտել» ընկերությունը, որի բաժնետոմսերի 90%-ի սեփականատերն է հունական OTE ընկերությունը, 10%-ի սեփականատեր հանդիսացող ՀՀ կառավարության կողմից մեղադրվում է նշված լիցենզիայի պայմանները չկատարելու մեջ: Հարցի շուրջ կազմակերպված լսումներին, որոնք անցկացվեցին օգոստոսի 29-ից սեպտեմբերի 4-ը, հարցաքննվեցին մոտ մեկ տասնյակ վկաներ, ներկայացվեցին կողմերի փաստարկները: Հայաստանի կառավարությունը հանդես եկավ «Արմենտել»-ին մենաշնորհից զրկելու առաջարկությամբ: Որպես անկախ կազմակերպության ներկայացուցիչ բաց ժողովի նախագահող էր ընտրվել ՀՀ Արժեթղթերի հանձնաժողովի նախագահ Էդվարդ Մուրադյանը:

Մեղրիում տիֆի վարակի աղբյուրը առայժմ հայտնաբերված չէ

ՄԵՂՐԻ, 23 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Մեղրի քաղաքում տիֆով հիվանդության առաջին դեպքի արձանագրումից անցել է գրեթե 7 օր, սակայն առայժմ վարակի աղբյուրը հայտնաբերված չէ: Մինչ օրս Մեղրիում գրանցվել է հիվանդության 4 դեպք, իսկ 6 հիվանդ էլ քաղաքային հիվանդանոցում ախտորոշում է անցնում: Այնինքի մարզպետ Էդիկ Բարսեղյանի որոշմամբ մարզի տարածքում նախատեսվում է կազմակերպել հակահամաճարակային, կարանտինային եւ սանիտարահիգիենիկ միջոցառումներ՝ ուղղված ինֆեկցիոն հիվանդությունների կանխարգելմանը: Համապատասխան հանձնարարականներ են տրվել մասնավորապես ջրմուղ-կոյուղու ծառայություններին՝ կատարել խմելու ջրի ամենօրյա վարակազերծում, ժամանակին ու արագ վերացնել ջրատարների ու կոյուղագծերի վթարները:

ՍՏԱՎՐՈՊՈԼԻ ԵՐԿՐԱՄԱՍ

Ձերբակալվել է Բուդյոնովսկի միլիցիայի Ռուսլան Գեւորգյանը

ԷՍԵՆՏՈՒԿԻ, 23 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ստավրոպոլի երկրամասում հանցախումբ կազմակերպելու կասկածանքով երկուշաբթի օրը ձերբակալվել է Բուդյոնովսկ քաղաքի միլիցիայի պետ Ռուսլան Գեւորգյանը: Ինչպես ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ին հայտնել են Ստավրոպոլի երկրամասի անվտանգության դաշնային ծառայության վարչության մամուլի ծառայությունում, ներքին գործերի վարչության պետից բացի, ձերբակալվել են նաեւ նույն այդ ներքգործշրջբաժնի հարկային հանցագործությունների դեմ պայքարի եւ տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի բաժինների պետերը, ինչպես նաեւ տեղացի երեք ձեռնարկատերեր Բորյաշովը, Հարությունյանը եւ Գրիգորյանը: Նրանք բոլորը կասկածվում են հանցախումբ կազմակերպելու, ծառայողական լիազորությունները գերազանցելու, խարդախության եւ աղօրինի ձեռնարկչությամբ զբաղվելու մեջ:

Ինչպես այսօր լրագրողներին հայտնել է ՌԴ ներքին գործերի նախարար Բորիս Գրիզլովը, գործողությունն անցկացրել են ներքգործնախարարության սեփական անվտանգության վարչության աշխատակիցները՝ անվտանգության դաշնային ծառայության եւ գլխավոր դատախազության ներկայացուցիչների հետ համատեղ:

Հանցավոր խմբի քրեական գործի հետաքննության շրջանակներում, ասել է նախարարը, արդեն կատարվել է 14 խուզարկություն, այդ թվում՝ Ռուսլան Գեւորգյանի երեք տներում: Ընդհանուր առմամբ առգրավվել է ավելի քան 1 մլն դոլար, 7 մլն ռուբլի, 5 կիլոգրամ ոսկեղեն, 5 միավոր չգրանցված զենք ու պայթանյութ:

Գրիզլովի տվյալներով, այս հանցավոր խմբի բացահայտման ուղղությամբ աշխատանք էր կատարվում մեկ տարվա ընթացքում: Նա նշել է, որ ձերբակալվածները կասկածվում են խոշոր չափերով դրամական միջոցների հափշտակման մեջ: «Նրանք ստեղծել էին էթիլային սպիրտի արտադրության ձեռնարկություն, որը չէր գրանցվել եւ հարկեր չէր վճարում», նշել է ներքգործնախարարը: Օրական արտադրվում էր մինչեւ 30 տոննա սպիրտ, որն իրացվում էր առեւտրային կառույցներում: «Այդ հափշտակումը ելուզակներին թույլ է տվել հսկայական գումարներ կուտակել: Բացի այդ, նրանք զբաղվում էին մտացածին պատրվակներով քրեական գործերի հարուցմամբ եւ դրանց դադարեցման համար կաշառքներ էին վերցնում», ընդգծել է Գրիզլովը:

ԸՆԹԱՑԻԿ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Ինչ չափով ազատություն տալ ԶԼՄ-ին

Սկիզբը՝ էջ 1

Հընթացս բազմիցս նշվեց, որ օրինագծի փոփոխությունների ձեւակերպմանն ակտիվորեն մասնակցել եւ հեղինակների հետ փոխհամաձայնության են եկել Հայաստանի ժուռնալիստների միությունը, Երեւանի մամուլի ակումբը, Ինտերնյուս կազմակերպությունը, «Իրավունք» թերթը: Այսինքն՝ այն ոլորտը, թե օրենքը ննջարկման է դրվել առանց լրագրողական հանրույթի մասնակցության, մտացածին է: Իսկ ինչ վերաբերում է ՄԱԿ-ին, ապա, ըստ Ատոմ Աբովյանի, ի սկզբանե այն դեմ է եղել որեւէ օրենքի մամուլի վերաբերյալ եւ միայն վերջին ամիսներին սեփական նախագիծ է ներկայացրել: Իսկ այդ ընթացքում որեւէ առարկության կամ փոփոխության առաջարկ նրա կողմից չի եղել:

Իսկ ինչպիսի հարցադրումներ են հուզում օրինագծի հակառակորդներին: Երկար ու մանրակրկիտ քննարկվեց այն խնդիրը, թե որն է լինելու օրենքի կարգավորիչ դերակատարման գլխավոր առաքելությունը՝ լրագրողների իրավունքների ու պարտականությունների սահմանո՞ւմը, թե՞ լրատվության սուբյեկտի ու այս ոլորտի իրավահարաբերությունները: Օրենքը լրագրողի մասին հիշում է միայն հավատարմագրման կարգը սահմանելիս: Լրագրողի իրավունքներին ու պարտականություններին ոչ մի տողով չի անդրադառնում, բնականաբար այլ օրենքներում եւս այդ մասին հիշատակություն չկա: Թե ինչու է այդպես, Ատոմ Աբովյանի բացատրությամբ՝ այդ խնդիրը վերապահված է միայն տվյալ լրատվամիջոցի ղեկավարին: «Չպետք է մտնել լրագրողի եւ գլխավոր խմբագրի առանքը», խրատեց նա: Իսկ, ըստ գլխադասային հանձնաժողովի նախագահ, գիտության, կրթության, մշակույթի եւ երիտասարդության հարցերով մշտական հանձնաժողովի նախագահ Հրանուշ Հակոբյանի, այդ սահմանումներն օրենքով չեն ամրագրվել լոկ լրագրողի ազատությունը չսահմանափակելու նպատակով, այսինքն՝ պետք չէ լրագրողին որեւէ շրջանակի մեջ դնել: Սույն դատողությունը հարուցեց «Արդարություն» խմբակցության ներկայացուցիչ Շավարշ Քոչարյանի զայրույթը: Նրա դիտարկմամբ, մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան, ուրեմն կոչված է բռնանալու մարդկանց ու հասարակական հարաբերությունների վրա:

Վիճահարույց խնդիրներից մյուսը վերաբերում է ԶԼՄ միջոցին՝ նախագծով վերապահված սահմանմանը: Այդ սահմանումը ներառում է ոչ միայն լրագրերը, հեռուստատեսությունը, ռադիոն, ամսագրերը, այլեւ ինտերնետը, որի կարգավորման հնարավորությունը մեկ պետության սահմաններից դուրս է: Խիստ ընդհանրական այս ձեւակերպումը, տպասվում է, որ տիտի խմբագրման ենթարկվի առաջինից երկրորդ ընթերցում ընկած ժամանակահատվածում:

Եվ իհարկե, խոսքի ազատության ապահովման երաշխիքներն էին հարցադրումների կիզակետում: Այս առթիվ Հրանուշ Հակոբյանը խոստացավ. «Ոչ թե պետք է փորձենք մեղմացնել գրաքննության խնդիրը, այլ իմպերատիվ կարգով հայտարարենք, որ ՀՀ-ում լրատվության գրաքննությունն արգելվում է եւ վերջակետ դնենք»: Ինչ վերաբերում է լրատվամիջոցների գործունեության սահմանափակմանը, ինչի վերաբերյալ մտավախություններ ունեն գործող ԶԼՄ-ներից ոմանք, ապա դա կլինի միայն ռազմական դրության եւ արտակարգ իրավիճակների դեպքում: Օրենքից ընդհանրապես հանվելու է գաղտնի համարվող տեղեկություն բովանդակող կամ քրեական պատժելի արարքներ քարոզող լրատվամիջոցի տվյալ թողարկումը դատական կարգով արգելելու դրույթը: Վերջնարդյունքում, հանձնաժողովի նախագահի համոզմամբ, օրենքի նախագիծը բավական լիբերալ, ժողովրդավար նախագիծ է, չնայած մեծ աղմուկ հանեց:

Նախագծի հակառակորդները, սակայն տրամագծորեն հակառակ կարծիքի էին, թե հիմնական խնդիրները հնստրեն, միտումնավոր հետին պլան են հրվում՝ առաջ մղելով ոչ էականը: Եվ որ օրինագիծը կարող է դառնալ տգնապահարույց, վտանգավոր իրադարձությունների մեկնարկի դրդիչ մեր հասարակության մեջ:

Ինչպես, ամենանախանձախնդիր ու մանրակրկիտ վերլուծությունների պատվի արժանացած նախագծի քվեարկությունը կկայանա այսօր:

Գրաքննությանը՝ ոչ

Աժ մուտքի առաջ երեկ առավոտյան պիկետ էին կազմակերպել Մամուլի ազգային ակումբի ներկայացուցիչները՝ համակիր լրագրողների մի խմբի հետ: Աժ շտաբող յուրաքանչյուր պատգամավորի հայտնվելուն պես նրանք համերաշխ վանկարկում էին՝ ամոթ, ամոթ նրանց, ովքեր կողմ կքվեարկեն ԶԼՄ օրենքի նախագծին: Պատգամավորների հակազդեցությունը խիստ գունագեղ էր: Ոմանք համերաշխ արձագանքում էին՝ հայտնելով իրենց միասնության մասին, ոմանք էլ հայր ու քարացած դեմքով անցնում ակցիայի մասնակիցների կողքից: Մեկն էլ ուղղակի դուռը շրխկացրեց լրագրողների քթին:

Լրագրողներին բախտ վիճակվեց «ամոթանքի արժանացնել ընդամենը մի 2 տասնյակ պատգամավորներ: Տրավորությունն այնպիսին էր, թե ազգային երեսփոխանների մեծ մասն այսօր չի ներկայացել նիստի: Քիչ անց պարզվեց, սակայն, որ դահլիճում գրանցված պատգամավորների թիվը 100-ից ավելի է: Մյուս մուտքով էին ներս ճողոպրել: Ինչպես, դրանից «պիկետչիկների» խանդավառությունը չմարեց: Նրանք մտադիր են շարունակել պայքարը եւ ուրբաթ օրը մամուլի ասուլիս կազմակերպել, որտեղ կհրապարակվեն այն պատգամավորների անունները, ովքեր «կհամարձակվեն կողմ քվեարկել նախագծին»:

Ի դեպ, ակցիային համերաշխ հետեւում էին նաեւ ոստիկանների անախադեպ սվարացած խմբերը՝ զենքի ու զրահը լրագրողներին ի ցույց:

Ա. Գ.

ԱՍՈՒԼԻՍ

ՀՀ նախագահի մամուլի քարտուղարը ամփոփեց...

ՀՀ նախագահի մամուլի քարտուղար Ատոմ Քոչարյանի մամլո ասուլիսն ամբողջությամբ նվիրված էր վերջին 2-3 շաբաթվա ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի արտասահմանյան այցելություններին՝ Բուլղարիա, Յալթա: Անդրադարձ եղավ նաեւ Լիտվայի նախագահի պաշտոնական այցին Հայաստան:

Սեպտեմբերի 8-9-ը Բուլղարիայում էր ՀՀ նախագահի գլխավորած պաշտոնական պատվիրակությունը: Ատոմ Քոչարյանը նշեց, որ իրավապայմանագրային լուրջ հիմքեր են ստեղծվել երկու երկրների համագործակցության համար՝ տնտեսական, գիտատեխնիկական, առեւտրային ասպարեզներում: Միջկառավարական եւ միջգերատեսչական պայմանագրեր են ստորագրվել առողջապահության, կրթության ու գիտության ոլորտներում: Հաստատվել է նաեւ հյուպատոսական կոնվենցիա՝ երկու երկրների քաղաքացիների համար հեշտացնելու այցագրային ռեժիմը: Առաջիկայում նախատեսվում է ստորագրել նաեւ տրանսպորտային եռակողմ համաձայնագիր՝ Հայաստանի, Բուլղարիայի եւ Վրաստանի միջեւ: Եվ Բուլղարիայի, եւ Հայաստանի նախագահները մասնակցել են բիզնես ֆորումի եզրափակիչ նիստին: Ֆորումին բուլղարական կողմից մասնակցել են 30 ֆիրմաների եւ 4 բանկերի, հայկական կողմից՝ 14 ֆիրմաների եւ 10 բանկերի ներկայացուցիչներ: Հայ-բուլղարական տնտեսական համագործակցությունն ամրագրվել է Հայաստանի արդյունաբերողների ու գործարարների միության, ինչպես եւ երկու երկրների առեւտրաարդյունաբերական պալատների համաձայնագրերով՝ գյուղմթերքների վերամշակման, նավթամթերքների ներկրման, բանկային ոլորտներում համագործակցության վերաբերյալ: Ատոմ Քոչարյանը Բուլղարիայի հետ բարեկամությունը կարեւորեց հատկապես այն առումով, որ այս երկիրն էլ աճում ու զարգանում է եվրոպականացման ճանապարհով:

Մանրամասն ներկայացվեց նաեւ Յալթայի գագաթաժողովին մեր պատվիրակության մասնակցության եւ ընդհանրապես գագաթաժողովի սցենարը: Գագաթաժողովը գնահատվել է իբրեւ ԱՊՀ վերակենդանացման հաջող փորձ, հենց թեկուզ նկատի առնելով այն հանգամանքը, որ ընդունվել է տնտեսական փոխգործակցության ծրագիր 2003-2010 թթ. համար: Չորս երկրներ (Ուկրաինա, Ռուսաստան, Ղազախստան եւ Բելառուս), չնայած որոշ մտավախությունների, համաձայնագիր են ստորագրել ազատ տնտեսական գոտի ստեղծելու վերաբերյալ: Դեռ հստակված չէ՝ Հայաստանը հետագայում կմիանա այդ երկրներին, թե ոչ:

ՀՀ նախագահը հանդիպել է Ուկրաինայի նախագահ Լեոնիդ Կուչմայի հետ: Քննարկվել են դարձյալ տնտեսական համագործակցության հարցեր: ՀՀ նախագահի երկրորդ հանդիպումը եղել է Վրաստանի նախագահի հետ: Թե ինչու ՀՀ նախագահն այս անգամ չի հանդիպել Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի հետ, մամուլի քարտուղարը բացատրեց գագաթաժողովի աշխատանքային գերծանրաբեռնված գրաֆիկով:

Ատոմ Քոչարյանն առանձնահատուկ կարեւորեց Լիտվայի նախագահի այցը Հայաստան այն հիմնավորմամբ, թե «ցանկացած երկկողմ բարձր մակարդակի այցելություն քաղաքական բարձր արժեք ունի, եւ բացի այդ, այս երկրում էլ բուռն զարգանում են եվրահնտեգրացման գործընթացները»: Լիտվայի հետ ստորագրվել են երեք համաձայնագրեր՝ երկկողմ հարաբերությունների, տնտեսական հարաբերությունների զարգացման եւ խորացման վերաբերյալ: Եվ իբրեւ նշանակալից նորույթ շրջանառվել է նոր՝ 3+3 ձեւաչափի գաղափարը, որը ներառելու է մերձբալթյան 3 եւ Հարավային Կովկասի երկրները:

Առաջիկայում ՀՀ նախագահի այցելությունների ուղղությունը լինելու է հետեւյալը՝ Հնդկաստան, Ռումինիա, իսկ տարեվերջին՝ Բելգիա:

ԿԱՐԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Գերմանական երաշխիքային վարկեր

Գերմանական վերականգնման վարկերի (KfW) բանկը Հայաստանի կառավարությանն է տրամադրում 4 մլն 345 հազար 980 եվրոյի դրամաշնորհ: Պայմանագիրը երեկ ֆինանսների նախարարությունում ստորագրել են նախարար Վարդան Խաչատրյանը եւ բանկի Արեւելյան ու Կենտրոնական Եվրոպայի Անդրկովկասի ֆինանսական եւ մասնավոր ոլորտի զարգացման բաժանմունքի տնօրեն Կլաուս Գլաուբիցը: Դրամաշնորհը հատկացվում է «Վարկերի երաշխիքային հիմնադրամ» ծրագրի շրջանակներում՝ 2003 թ. հունվարին Գերմանիայի եւ Հայաստանի կառավարությունների միջեւ ֆինանսական հատատությունից միջոցներ ներգրավելու եւ դրանք նպատակաուղղելու փոքր ու միջին ձեռնարկությունների վարկավորմանը: Ծրագիրն իրականացվում է Հարավային Կովկասի բոլոր երկրներում:

KfW բանկի ներկայացուցիչը նշում է, որ ծրագիրը հնարավորություն կընձեռի Հայաստանի մասնավոր առեւտրային բանկերին համաշխարհային ֆինանսական շուկայում միջոցներ գտնելու: Նմանատիպ ծրագրերի իրականացման փորձը Արեւելյան Եվրոպայում ցույց է տվել, որ մասնավոր առեւտրային բանկերին աջակցելու այս եղանակն արդյունավետ է: Հայաստանյան բանկերի համագործակցությունը միջազգային ճանաչում ունեցող բանկերի հետ կնպաստի մեր բանկերի նկատմամբ վստահության ամրապնդմանը: «Համագործակցությունը կնպաստի հայաստանյան բանկերի վարկանիշի բարձրացմանը: Չեր երկրի բանկերը ռիսկային են համարվում, ինչը, մեր համոզմամբ, կանխակալ վերաբերմունք է», նշում է Կլաուս Գլաուբիցը:

Չնայած միջազգային շուկայում վարկավորման տոկոսադրույքները բավականին ցածր են, հայաստանյան բանկերը միտ չէ, որ ունեն դրանց հետ համագործակցելու հնարավորությունը՝ ռիսկայնության պատճառով: Այս դեպքում ռիսկն իր վրա է վերցնում KfW բանկը: Ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարի կարծիքով, համագործակցության արդյունքն կարող է լինել նաեւ այն, որ KfW-ի ֆինանսական միջոցներն օգտագործող Հայաստանի մասնավոր բանկերը կարող են վարկավորում իրականացնել ավելի ցածր տոկոսադրույքով:

Գերմանիայի հետ նման համագործակցությունը նոր չէ: Հայ-գերմանական հիմնադրամի միջոցով իրականացվող փոքր եւ միջին բիզնեսի աջակցման ծրագիրն այսօր հաջողությամբ իրականացվում է. հաջորդ ամիս կներգրավվի եւս 5 մլն դոլար: Ըստ Վարդան Խաչատրյանի, այս ծրագիրն ապահովում է գրեթե 100 տոկոս վերադարձելիություն: Նախարարի համոզմամբ, պատճառն այն մեխանիզմներն են, որ կիրառում է գերմանական կողմը:

Թե որ բանկերը կկարողանան համագործակցել KfW-ի հետ, պարզ կլինի մոտ ապագայում:

Մ. Հ.

Կուբանի եւ Հայաստանի Արմավիրները եղբայրացան

Ռուսաստանի հարավի հայերի «Երկրամաս» թերթը հաղորդում է, որ Կուբանի Արմավիր քաղաքում սեպտեմբերի 21-ին ստորագրվել է Հայաստանի մարզկենտրոն Արմավիրի հետ համագործակցության պայմանագիր: Նույնանուն երկու քաղաքները երկու լեզվով (ռուսերեն եւ հայերեն) մշակել են իրենց եղբայրացմանը վերաբերող փաստաթուղթ: Պաշտոնական պատվիրակությունների ղեկավարները երկու Արմավիրների քաղաքագլուխներն էին՝ Վիկտոր Կոլոդյաժնին եւ Արարատ Չաքարյանը, որոնք էլ ստորագրել են պայմանագիրը:

Ինչպես հայտնի է, Ռուսաստանի հարավում 18-րդ դարի վերջերին Արմավիր քաղաքը հիմնել են հայ վերաբնակները, նոր բնակավայրին տալով Մեծ Հայքի երբեմնի մայրաքաղաք Արմավիրի անունը:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության թվականը տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս: 374-1-562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Լրագրողների սենյակ
/ հեռ. 581841
Համակարգ. ծառայություն
/ հեռ. 582483
Շուրջօրյա լրահավաք ծառայություն
/ հեռ. 529353
Apple Macintosh
համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի
Թերթի նյութերի ամբողջական թե մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսությամբ, առանց խմբագրության գրավոր համաձայնության, խստիւ արգելւում են, համաձայն ՀՀ հեղինակային իրավունքի մասին օրենքի:
Նյութերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

Համաժողովը ոլորտային քննարկումների փուլում էր

Հայաստան-սփյուռք տնտեսական համաժողովի երկրորդ օրը տեղի ունեցան ոլորտային քննարկումներ: «Արմենիա» հյուրանոցային համալիրի սրահներում տեղի եւ սփյուռքի գործարարները կառավարության ներկայացուցիչների հետ քննարկեցին տնտեսական քաղաքականության, տարածքային զարգացման, հարկային եւ մաքսային քաղաքականության, պետական եւ մասնավոր հատվածի համագործակցության, զբոսաշրջության, հանքարդյունաբերության, տեղեկատվական տեխնոլոգիաների, ոսկերչության եւ ակնագործության, թեթեւ արդյունաբերության, գիտության եւ տեխնոլոգիաների խնդիրները: Տեղի ունեցած նիստերի մանրամասները ներկայացնելու խնդրանքով դիմեցինք վերոնշյալ ոլորտները համակարգողներին:

Տնտեսական քաղաքականության ոլորտը համակարգում էր առեւտրի եւ տնտեսական զարգացման փոխնախարար Գագիկ Վարդանյանը:

- Երկու հիմնական ուղղություն էր քննարկվում: Առաջինը՝ տնտեսական քաղաքականության խնդիրները եւ դրանց լուծումները, երկրորդ՝ այն ծրագրերը, որոնք իրականացվում են այստեղ: Ներկայացվեցին մեր անցած ճանապարհը, այն օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառները, որոնք ինչ-որ չափով նպաստել կամ դանդաղեցրել են զարգացումները, վեր հանվեցին հանրապետությունում առկա սոցիալ-տնտեսական խնդիրները, որոնք, չնայած վերջին տարիներին արձանագրվող աճի տեմպերին, խոչընդոտում են զարգացմանը: Առանձնացվեցին հատկապես բնակչության ցածր կենսամակարդակի, եկամուտների խիստ բեւեռացվածության, կենսաթոշակների ցածր լինելու հանգամանքները, կրթական եւ առողջապահական ոլորտի հիմնախնդիրները: Նշվեց, որ դեռեւս տնտեսության արդյունավետությունը բավարար մակարդակի վրա չէ, շուկայական ենթակառուցվածքի տարրերը լիարժեք չեն ձեւավորվել: Պետք է վերացնել տեխնոլոգիական խզվածքը, ինչը կառավարության ծրագրով նախատեսված է առաջիկա 4 տարում: Դրանից հետո պետք է առավել ուշադրություն դարձվի որակական կողմին, որպեսզի մենք զարգացման խնդիրը լուծենք:

Ասեմ, որ շատ հետաքրքրական քննարկում էր, լսվեցին արժեքավոր առաջարկություններ սփյուռքի մեր գործընկերներից: Մեզ ընդդիմախոսեց Երեւանի պետական տնտեսագիտական ինստիտուտի ռեկտոր Գրիգոր Կիրակոսյանը, որը շատ լուրջ հարցադրումներ արեց:

Առեւտրի եւ տնտեսական զարգացման մյուս փոխնախարար Արա Պետրոսյանը համակարգում էր զբոսաշրջության ոլորտը:

- Առարկայական քննարկումներ եղան, լուրջ եւ գործնական առաջարկներ հնչեցին ինչպես սփյուռքի գործարարների, որոնք արդեն հայկական շուկայում ներդրումներ են կատարել, այնպես էլ տեղի ընկերությունների կողմից, որոնք նույնպես երկարատեւ աշխատանքի փորձ ունեն:

Ոլորտում տարեկան 20-30 տոկոս կայուն աճ ունենք, իսկ 2002 թ. այդ աճը գերազանցեց 50 տոկոսը: Խոչընդոտները վերաբերում են ենթակառուցվածքների ձեւավորման, ծառայությունների որակի բարձրացման խնդիրներին, որոնք կառավարությունն ի սկզբանե վեր է հանել եւ գտնվում են լուծման փուլում: Նիստի ընթացքում, բնականաբար, եղան գործնական առաջարկներ, որոնք կներգրավվեն համաժողովի եզրափակիչ փաստաթղթերի մեջ: Հետագայում մենք ձեռնամուխ կլինենք դրանց իրագործմանը:

Մասնավոր եւ պետական հատվածների համագործակցության խնդիրները քննարկող նիստը համակարգում էր առեւտրի եւ տնտեսական զարգացման մեկ այլ փոխնախարար Տիգրան Դավթյանը:

- Հիմնական նպատակն էր պարզել, թե ինչպես մասնավոր հատվածը կարող է օգնել երկրի սոցիալական խնդիրների լուծմանը: Կարծում եմ, որ մեր մասնավոր հատվածն այնքան է զարգացել, որ պետք է մտածի նաեւ երկրի ընդհանուր սոցիալ-տնտեսական վիճակի մասին, հնարավորություն գտնի աջակցելու աղքատության նվազեցման, ենթակառուցվածքների ձեւավորման եւ այլ խնդիրների լուծմանը: Այս նախաձեռնությունն արվել է մեր նախարարության եւ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի գրասենյակի համատեղ ջանքերով: Խոսքն առանձին խնդիրների լուծման մասին է, լինի դա կրթության, սոցիալական պահովության, մշակույթի բնագավառներում, թե կոնկրետ սոցիալական ծրագրերի առումով: Մեզ հետաքրքրական էր, թե մեր բիզնեսը՝ հայաստանյան եւ սփյուռքի, սկզբունքորեն պատրա՞ստ է այդ նախաձեռնությանը մասնակցելուն: Այդ հարցի պատասխանը միանշանակ դրական էր:

Երեկ ոլորտային քննարկումներն ավարտվեցին, իսկ այսօր տեղի կունենա Հայաստան-սփյուռք տնտեսական համաժողովի եզրափակիչ լիագումար նիստը:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Նաղդալյանի գործով դատավարությունը անթիվ հուշարարներ ունի

Սկիզբը՝ էջ 1

Վերջինս պնդեց նախաքննական ցուցմունքները, ապա խնդրեց հրապարակել դրանք, պատճառաբանելով, թե ամբողջությամբ ցուցմունքը լավ չի հիշում: Հետո մտափոխվելով, ավելի ճիշտ՝ դատախազների ու չգիտես դահլիճից էլ ում հետ հայացքով, ձեռքով ու մի երկու բառ խոսելով, Գրիգոր Պետրոսյանը որոշեց, որ պետք է ցուցմունք տա: Միանգամից եւ մեկ շնչով ամբաստանյալ Պետրոսյանը հայտարարեց, որ Գեղամ Շահբազյանն իր մանկության ընկերն է, իսկ Ատրը՝ մոտիկ ընկերը: «Մի օր խոսակցություն եղավ, Գեղամն ասաց, որ Լյովան սպանության պատվեր ունի, ինչ-որ լրագրողի մասին էին խոսում»: Այդ խոսակցության ընթացքում Լյովա Հարությունյանն ասել է, թե որտեղ է աշխատում Տիգրանը, բայց հետագայում հրաժարվել է պատվերը տալուց:

Այստեղ Գրիգոր Պետրոսյանը կրկին մտափոխվեց, թե պետք է հրապարակել իր նախաքննական ցուցմունքները: Եվ որպեսզի արդարացնի իր «չխոսկանությունը», ամբաստանյալը հայտարարեց. «Իմ դերն այստեղ (սպանության գործում-Ա. Հ.) եղել է լսելը, եթե խուլ լինեի, այստեղ (ամբաստանյալի աթոռին-Ա. Հ.) չէի լինի, ոչ մի ակտիվ գործողության ես չեմ մասնակցել»:

Գրիգոր Պետրոսյանը եւս մեկ անգամ մտափոխվեց, ուստի հրապարակեցին նրա ցուցմունքները: Պետրոսյանի պաշտպան Լուսնթագ Բաղայանն առաջարկեց հրապարակել Պետրոսյանի բացատրությունը, որ երբ վերջինս իմացել է իր հետախուզվելու մասին, ինքնակամ է ներկայացել եւ ցուցմունք տվել: Բայց քանի որ օրենսդրությունը պահանջում է հրապարակել միայն ցուցմունքները, ուստի դատարանում հրապարակվեցին 2003 թ. մարտին եւ մայիսին Պետրոսյանի տված ցուցմունքները:

Ըստ այդ ցուցմունքների, Գրիգոր Պետրոսյանն առաջադրված մեղադրանքում իրեն մասնակիորեն մեղավոր է ճանաչել, նշելով, որ սպանությունն իրագործողների կողմից ինքն ակամա է ներքաշվել հանցագործության մեջ: Իսկ պատմությունը, Գրիգոր Պետրոսյանի համար, սկսվել է այսպես: Գեղամ Շահբազյանը Գրիգոր Պետրոսյանին ասել է, որ Լյովա Հարությունյանն սպանության պատվեր ունի, որի համար մեծ գումար կտան: Ըստ Շահբազյանի, փողը Լյովա Հարությունյանը պետք է վերցներ Վազգեն Սարգսյանի եղբայր Արմեն Սարգսյանից: Գեղամ Շահբազյանը ցանկացել է ճշտել, թե Արմեն Սարգսյանն արդյոք սպանության համար գումար կտա՞: Դրա համար էլ հանդիպել է Հովհաննես Հարությունյանին (Ատրը): Ատրն, ըստ Շահբազյանի, ասել է, թե Արմեն Սարգսյանը կտա 50 հազար դոլար:

«Հանդիպումների ժամանակ, երբ տղաները քննարկում էին լրագրողի սպանությունը, ես հուզվել եմ, անգամ լաց եղել, անգամ առաջարկել դրա փոխարեն բանկ կտրել», իր ցուցմունքում նշել է Գրիգոր Պետրոսյանը:

Երբ զենքերի հարցն է բարձրացվել, Գրիգոր Պետրոսյանը տվել է տանն ունեցած իր զենքը՝ 4 փամփուշտով, սակայն հետո մտածելով, որ այդ զենքի միջոցով կարող են բռնել նաեւ իրեն, վերադարձրել է իր զենքը. Ատրին ասելով, թե դա գրանցված է եւ կարող են գտնել: Ըստ Պետրոսյանի, Ատրը չի ցանկացել հանդիպել անմիջապես պատվերը կատարողների՝ Ֆելիխի եւ Ջոնի հետ: Դրա համար կապն ըստ էության պահպանվել է Գրիգոր Պետրոսյանի եւ Գեղամ Շահբազյանի միջոցով: Գրիգոր Պետրոսյանը տեղյակ է եղել նաեւ գումարի, դրա ուղացման հետ կապված պատմություններին: Իսկ որ իրեն տրվել է 2,5 հազար դոլար, Պետրոսյանը ժխտում է:

Հետաքրքրական է, որ իր ցուցմունքում Գրիգոր Պետրոսյանը նշել է, թե տեղեկանալով սպանվածի ինքնության մասին, ինքը հանդիմանել է եւ «տղաներին», եւ Ատրին, թե «դրա տակից դուրս գալ կլինի՞»:

Եվս մեկ հետաքրքրական հանգամանք Գրիգոր Պետրոսյանի ցուցմունքից: Թե որտեղից են վերցվել սպանության ժամանակ օգտագործված զենքերը, Գրիգոր Պետրոսյանի լրացուցիչ ցուցմունքում ասվում է, թե իր լսելով զենքերը պիտի տար Վազգեն Սարգսյանի թիկնապահ Մոսոն:

Հայտարարված ընդմիջումից հետո Գրիգոր Պետրոսյանը, ըստ իրեն, բացատրեց սպանության մասնակիցների դդրդապատճառները, որոնցից թերեւս հետաքրքրական էր այն, որ բոլորի նման փողային հարցեր լուծելուց բացի Ատրը ցանկացել է նաեւ ներկայանալ որպես Վազգեն Սարգսյանի վրեժը լուծող:

«ԼԻՆՍԻ» ԾՐԱԳԻՐ

Աստարակի կամրջի շինարարությունն ավարտված է

ԵՐԵՎԱՆ, 23 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Վերջնական շահագործման համար այսօր փորձարկվեց «Լինսի» հիմնադրամի միջոցներով կառուցված Աստարակի կամրջի երկրորդ թեւը, որով կամբողջանա Երեւան-Գյումրի ավտոճանապարհի կամրջային անցումը: Այսուհետեւ մեքենաները կարող են անվտանգ երթեւեկել երկկողմանի կամրջով: Կամրջի առաջին հատվածը շահագործվել է 1994 թվականին, երկրորդ հատվածը, որը եւս եղել է նախագծում, ֆինանսական միջոցների բացակայության պատճառով մնացել էր անավարտ:



Փորձարկումն իրականացրեց մոտ 300 տոննա ընդհանուր կշռով 12 մեքենաներից բաղկացած ավտոշարասյունը, որը 5 կմ/ժամ արագությամբ, իրարից 5 մ հեռավորության վրա մի քանի անգամ անցավ կամրջով: Փորձարկման խմբի ղեկավար, Երեւանի ճարտարապետաշինարարական պետական համալսարանի «Ճանապարհներ եւ կամուրջներ» ամբիոնի վարիչ Ալբերտ Ավետիսյանի պարզաբանմամբ, այս բեռնվածությունը կամուրջների նախագծային նորմերով սահմանված հեռանկարային բեռնվածք է: Ավելի ծանր բեռնվածության դեպքում հատուկ թույլտվությամբ կատարվում են բոլոր հաշվարկները, որից հետո կամ ընտրվում է այն հատվածը, որով այդ ծանրաբեռնվածությամբ անվտանգ կարող է անցնել մեքենան, կամ ամրացվում է կամուրջը:

Ըստ «Լինսի» հիմնադրամի «Ճանապարհաշինություն» ՇԻԳ-ի տնօրեն Էդվարդ Բեգոյանի, կառույցը շահագործվել է նախատեսված ժամկետից (հոկտեմբերի 20) շուտ: Շինարարությունն իրականացրել է կամրջաշինության մեջ մասնագիտացած «Կամուրջշին» ընկերությունը: 2002 թ. հունիսից սկսած կառուցապատման աշխատանքների վրա ծախսվել է 1 մլն 780 հազար դոլար: Է. Բեգոյանը նշեց, որ կամրջի պաշտոնական բացումը կկատարվի հավանաբար հոկտեմբերի սկզբին:

«Լինսի» հիմնադրամի «Ճանապարհաշինություն» ծրագրով վերանորոգվել է նաեւ Նոր Հաճընի երկհարկանի կամուրջը, ինչպես նաեւ ճանապարհների վերակառուցման հատվածներում գտնվող մի շարք փոքր կամուրջներ:

Համակարգչային հայերեն ծրագրերի կարիք ունենք

Եղած վերաբերմունքից պարզվում է՝ ոչ այնքան...

Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանում գործող «ԻՍՍԱ» ընկերության տնօրեն, համալսարանի կոմպյուտերային համակարգեր եւ ինֆորմատիկա բաժանմունքի պրոֆեսոր Էդուարդ Մանուկյանը երեկ մամլո ասուլիս էր հրավիրել «Նեմեսիս» հասարակական կազմակերպության վարձակալած դահլիճում՝ հայ-անգլերեն թարգմանչական համակարգի նորություններին ծանոթացնելու, ինչպես նաեւ Windows ծրագրի հայերեն տարբերակը ցուցադրելու համար:

Հիշեցնենք, որ այս տարվա հունիսին «Բաց հասարակության ինստիտուտ» հասարակական կազմակերպությունն ու «Եվրասիա» հիմնադրամը անցկացրին «Հայ-անգլերեն թարգմանչի ստեղծման խնդիրները» սեմինարը, որին մասնակցեցին տվյալ խնդրով զբաղվող անհատներն ու կազմակերպությունները: Պրն Մանուկյանի մշակած թարգմանչական համակարգը արժանացավ հավանության եւ աշխատանքը շարունակելու համար ստացավ դրամական պարգեւ՝ 5 հազար դոլար:

Հայերեն տեղեկատվական դաշտ ստեղծելու եւ ընդլայնելու համար, անշուշտ, չափազանց մեծ է հայ-անգլերեն թարգմանչական ծրագրի նշանակությունը: Դա հնարավորություն կտա ինտերնետի միջոցով մի քանի վայրկյանի ընթացքում հայերենի վերածել ամենավերջին գիտական ուսումնասիրությունները, մասնագիտական գրքերը եւ այլն:

Պրն Մանուկյանի ստեղծած համակարգն այսօր ունի 1300 բառ, կատարում է իմաստային թարգմանություն, ինչպես նաեւ հնչեցնում է տեքստը: Ամբողջապես պատրաստ է Windows համակարգչային ծրագրի հայերեն տարբերակը: Ցավոք, ընկերությունը պետական արտոնագիր առ այսօր չունի, հետեւաբար կատարած ողջ աշխատանքը մնում է անտեսված ու անկիրառելի: Դժվարին պայմաններում, մտավոր մեծ լարումով ձեռք բերվածը մնացել է կառավարության ու բարեգործների ուշադրությունից դուրս: Պատճա՞ռը: Իրենց գործը լռելյայն անող մարդիկ պարզապես դուրս են մնում նրանց տեսադաշտից, առաջ են մղվում ձեռներեցներն ու ճարպիկները, որ լավ գիտեն որտեղից եւ երբ գումար հայթայթելու ուղիները: Հուսանք, որ պրն Մանուկյանին արտոնագիր շնորհելու հարցը լուծելի կդառնա ու կգտնվեն նրան աջակցող մարդիկ, որպեսզի նրա կուտակած բազմամյա փորձն ու գիտելիքները հոդս չցնդեն:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Դիտարկումներ

Տնտեսությունների զարգացման ուղին խոշորացումն է

ԼՂՀ գյուղատնտեսության նախարար Բենիկ Բախշյանը համոզված է, որ Ղարաբաղի գյուղատնտեսության զարգացումը մեծ մասամբ պայմանավորված է մանր տնտեսությունների խոշորացմամբ: Փոշիացված տնտեսությամբ հնարավոր չէ երաշխավորված բերք ապահովել, որովհետեւ այն տարեայնորեն է կառավարվում, այլ ոչ թե կազմակերպված եւ գիտականորեն հիմնավորված:

Գյուղնախարարն օրերս լրագրողների հետ ունեցած հանդիպման ժամանակ այս տեսակետը հիմնավորեց ընթացիկ տարում ԼՂՀ-ում ստացված հացահատիկի բերքի առատությամբ: Ոչ մի երաշխիք չկա, որ եկող տարի այսչափ հացահատիկ կհավաքվի, իսկ ավելին ստանալու մասին խոսելն անհամոզիչ կլիներ: Արցախում հացահատիկի արտադրությամբ զբաղվում են մեծ թվով մենատնտեսներ, սակայն այս բնագավառում «եղանակ ստեղծողները» խոշոր հողատերերն են: Իսկ ընդհանրապես, այս գյուղմթերքի զանգվածային մակարդակը լեռնային եւ նախալեռնային գոտիներում պատճառ է դառնում հողի հողմնահարման: Գյուղնախարարի տվյալներով, հանրապետության 45 համայնքներում սկսվել է հողմնահարումը, որը սպառնում է առավել մեծ չափեր ընդունել: Անհրաժեշտ է մակկվող հողատարածքների մի մասը տրամադրել գյուղատնտեսական այլ կուլտուրաների ցանքերին: Այս ուղղությամբ նախարարությունը ծրագիր է մշակել: Մասնավորապես, ընթացիկ տարում Ղարաբաղում սկսել են ցանել սիսեռ: «Ակադեմիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ցանած 100 հա սիսեռի ցանքատարածքից ստացված սերմացուն թույլ կտա հաջորդ տարի եւս 1200 հա սիսեռ ցանել: Նախատեսվում է զարգացնել նաեւ արեւածաղկի, եգիպտացորենի ու կարտոֆիլի արտադրությունը, ընդ որում, գյուղնախարարի կարծիքով՝ Ղարաբաղը հնարավորություն ունի բավարարելու կարտոֆիլի իր պահանջները սեփական արտադրությամբ:

Այսօր ԼՂՀ-ում գյուղատնտեսության զարգացման ամենահեռանկարային ճյուղը խաղողագործությունն է: Ներկայումս Արցախում կա 1500 հա հին եւ 300 հա նորատունկ խաղողայգի: Նախարարության մշակած՝ տնտեսությունների խոշորացման ծրագրի շրջանակներում նախատեսվում է ստեղծել տնկարաններ, որտեղ պետք է աճեցվեն շուրջ մեկ միլիոն տնկիներ: Դրանք կբաժանվեն խաղողագործությամբ զբաղվել ցանկացող գյուղացիներին, որովհետեւ վերջիններս ի վիճակի չեն առաջարկեն գյուղատնտեսական այլ կուլտուրաների ցանքերին: Այս ուղղությամբ նախարարությունը ծրագիր է մշակել: Մասնավորապես, ընթացիկ տարում Ղարաբաղում սկսել են ցանել սիսեռ: «Ակադեմիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ցանած 100 հա սիսեռի ցանքատարածքից ստացված սերմացուն թույլ կտա հաջորդ տարի եւս 1200 հա սիսեռ ցանել: Նախատեսվում է զարգացնել նաեւ արեւածաղկի, եգիպտացորենի ու կարտոֆիլի արտադրությունը, ընդ որում, գյուղնախարարի կարծիքով՝ Ղարաբաղը հնարավորություն ունի բավարարելու կարտոֆիլի իր պահանջները սեփական արտադրությամբ:

Գյուղատնտեսության կայուն զարգացման խոչընդոտ է նաեւ գյուղտեխնիկայի անմխիթար վիճակը: Այս խնդիրն առկա է հանրապետության բոլոր գյուղերում: Եվ թերեւս դրանով է պատճառաբանվում ամեն տարի Արցախում արտադրված բերքի շուրջ 1/3-ի կորուստը: Տրամաբանական է, որ ֆերմերները եւ մենատնտեսները ի զորու չեն սեփական միջոցներով գյուղատնտեսական նոր տեխնիկա ձեռք բերել: Բ. Բախշյանի խոսքերով, բանակցություններ են տարվել Մինսկից լիզինգի կարգով նոր գյուղատնտեսական տեխնիկա ստանալու, եւ կան նախադրյալներ, որ ոչ հեռու ապագայում խնդիրը դրական լուծում կստանա:

ԼՂՀ գյուղնախարարի, որն ի պաշտոնե նաեւ փոխվարչապետ է, տեսակետով՝ Արցախում հացի թանկացման միտումը չի կարող կասեցնել նույնիսկ ցորենի առատությունը, որովհետեւ Ղարաբաղը Հայաստանի Հանրապետության հետ գտնվում է նույն տնտեսական եւ մախային դաշտում, ուստի եւ կախված է Հայաստանի գնային ուկայից: Ի դեմ, Արցախում հացի թանկացման վերաբերյալ (իսկ հացը ամռան ընթացքում երկու անգամ է թանկացել) շաս յուրօրինակ պարզաբանում է տվել Ստեփանակերտի հացի գործարանի գործադիր տնօրեն Գրիշա Հայրապետյանը: Վերջինիս բնութագրմամբ՝ հացի թանկացման «մեղավորը» մենատնտես գյուղացին է, որն իբր դիտավորյալ թանկ է վաճառում իր ցորենը: Թե ինչ կերպ կարող է ուկայի վրա ազդել գյուղացու արտադրած 2-3 տոննա ցորենը, Գ. Հայրապետյանը չի մանրամասնել:

Գյուղնախարար-փոխվարչապետը իրավացիորեն գտնում է, որ հացի գնի կայուն պահպանման լավագույն միջոցը հանրապետությունում հացահատիկի պահուստային ֆոնդ ստեղծելն է: Նրա խոսքերով, նախատեսվում է 200 մլն դրամ հատկացնել հաջորդ տարի շուրջ 2000 տոննա հացահատիկ գնելու եւ պահեստավորելու նպատակով: Դա թույլ կտա հնարավորինս կանոնակարգել հացի գնային ուկան ԼՂՀ-ում: Այդուհանդերձ, ըստ Բ. Բախշյանի, այսօր Արցախում հացի գինը, 1 կգ-ի հաշվով, 20 դրամով զիջում է հայաստանյան գներին:

ԼՂՀ-ում գյուղատնտեսության զարգացման կարեւոր խթան կլինի նաեւ ոռոգման համակարգի ընդարձակման ծրագրի իրականացումը: Ղարաբաղը երբեւէ մեծ ծավալներով ոռոգման համակարգ չի ունեցել, որովհետեւ Ադրբեջանի խստական քաղաքականության հետեւանքով երկրամասի գետերի ջրերը միշտ ոռոգել են հարթավայրային ադրբեջանաբնակ գոտիների հողատարածքները: Այժմ ԼՂՀ-ում այս ուղղությամբ միայն տեղային աշխատանքներ են տարվում: Պետբյուջեով հատկացված տարեկան 80 մլն դրամը ծախսվում է միայն գործող ջրանցքների վերանորոգման համար: Համաձայն ծրագրի՝ հետագայում պետք է հանրապետությունում 20.000 հա ոռոգովի հողատարածքներ ստեղծել, իսկ դա արդեն կապված է ֆինանսական մեծ խնդիրների հետ:

ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Ստեփանակերտ

«Գնում ես քո բաժին տառապանքը շարունակելու»

1991 թ. Արթուր Արմինը (Բաբայան) Հայաստանից մեկնեց ԱՄՆ: Մինչ այդ Երեւանում տնտեսագիտական ինստիտուտն ավարտելուց կարճ ժամանակ անց ձերբակալվում է՝ դատապարտվելով 9 տարվա ազատազրկման: Բանտային տարիները թերեւս մեծ փորձություն էին: Այդ ընթացքում նա գրեց «Փոքր Մեր» պոեմը, «Մարզպան» պատմական չափածո դրաման, «Նամակներ մենության հեռուներից» բանաստեղծությունների շարքը, որ հետագայում՝ 1989 թ. հրատարակեց «Արեւիկ» հրատարակչությունը: Այստեղից նա նամակակցում էր նշանավոր մտավորականների՝ Ղուկաս Չուբարյանի, Վարդգես Պետրոսյանի, Ռաֆայել Իշխանյանի, Հրանտ Մաթեւոսյանի, Համո Սահյանի հետ: Նրանց եւ տասնյակ ուրիշ մտավորականների տարիների ջանքերով Արթուր Բաբայանին 1988-ին հաջողվեց ազատվել խորհրդային բանտի ճիրաններից: Բանաստեղծական նկարագիրը ներկայացնում է բարդ ու հակասական մի կերպար՝ անհանգիստ, ներքին անհանգրվան կեցությամբ: Երկրային տարբեր բնակավայրերում իր՝ ճամփորդի կայանումների ամեն քայլն ուղղված է հոգեւոր ինքնության բացահայտմանը, մարդու էության գերնպատակին՝ ինքնաճանաչման-ինքնակատարելագործմանը:

- Ազատության համար ժողովրդական ընդվզումների եւ 1988-ի ազգային վերազարթոնքին անմիջապես հաջորդող տարիներին հեռացաք Հայաստանից, ինչո՞ւ:

- Գնացի Հայաստանից, որովհետեւ սոցիալիզմը բնավ չէր փոխվել: Ամեն դրական երեւույթ կամ զարթոնք կարող է դժոխք դառնալ, եթե առջեւից գնացող խումբը կամ անհատը ուժեղ չեն կամ կասկածելի են: Մի քանի հանդիպումներից կռահեցի, որ ուրիշ տեղ ենք գնում, ես չէի ուզում երկրորդ անգամ բանտ ընկնել: Մեր գիտակցությունը ձեւավորվել էր խորհրդային կեցությամբ, մինչդեռ արագորեն փորձում էինք կառուցել կապիտալիստական հարաբերություններ: Դա հնարավո՞ր է: Ուզում էին տալիս այդ ճանապարհն անցնել ավելի արագ: Ի տարբերություն մյուս հանրապետությունների, Հայաստանն ուներ պատրաստի կադրեր, եւ միանգամայն դյուրին կարելի էր օգտագործել դրսի հայության ուժերը: Մինչդեռ այդ տարիներին ոչ միայն չօգտագործեցինք դա, այլեւ ձեռքից բաց թողեցինք կարեւորը: Ողջ հանրապետության ինտելեկտուալ կապիտալը ջրի եւ ավազի նման գնաց: Արտադրական հիմնական միջոցների ահռելի մասը ոչնչացվեց «սեփականաշնորհում» կոչվածից: Առաջա հարյուր տարվա մեջ որեւէ իշխող կառավարություն չի ունենալու այն հնարավորությունը, որ ունեցան առաջին իշխանությունները՝ ժողովրդի 90 եւ ավելի տոկոսի վստահություն եւ հավասարակարգություն՝ մեկ ազգային գաղափարի շուրջ:

Իսկ ինչ վերաբերում է մեկնելուն, գնում ես քո բաժին տառապանքը շարունակելու:

- Ի՞նչ է տրվում հայաստանցի էմիգրանտին ԱՄՆ տեղափոխվելիս, ինչպիսի՞ արգելքներ կարող են լինել, եւ ի՞նչ փոխներթափանցումներ, հարաբերություններ նոր երկրի եւ հին տեղաբնակների հետ:

- Առաջին 5-7 տարիներին էմիգրանտը սոցիալական հարմարվողականության շրջան է ապրում՝ ծանոթություն հասարակական, տնտեսական կառույցներին, լեզվական արգելապատնեշի հաղթահարում: Փոքր ազգերը ամերիկյան մշակույթի ներքո ստեղծում են իրենց կենցաղային եւ մշակութային ենթակառույցները, երբ ավարտվում է հարմարվելու առաջին շրջանը, սկսվում է կենտրոնախույս ուղղությունը, որովհետեւ անհատին թվում է՝ արդեն ինքն ուժեղ է նոր միջավայրում դիմանալու համար: Ավելի ծանր է երեխաների վիճակը: Նրանք ձեւավորվում են ո՛չ հայկական, ո՛չ ամերիկյան , խառը, ծեղքված հոգեվիճակներով, որոնց արտի մեջ կա իրենց ստեղծածը,բայց իրականության հետ չհամապատասխանող միֆական մի Հայաստան: Ավելի դժվար է Իրանից, Լիբանանից ներգաղթածների վիճակը՝ Հայաստանից գաղթածը Հայաստանի հետ կապված ավելի սերտ հարաբերություններ ունի՝ ազգականներ, ընկերներ: Իրենց պարագայում դա էլ չկա:

Եվ առհասարակ սփյուռքը ձեւավորված կառույց չէ, բավականին խայտաբղետ, տարեային զանգված է, որ 2-3 սերունդ հետո պարտադրված է ասիմիլյացիայի ճուլման:

- Կարծիք կա, որ արտագաղթն ինչ-որ տեղ դրական ներգործություն ունեցավ լոսանջելեսահայության վրա:

- Ժողովուրդն իր բնազդով կատարեց ծայրահեղ մի քայլ՝ իր տեսակը պահպանելու, գոյատեւելու համար բաժանվելով մի քանի հատվածների, որ պատմական այս փուլում իրեն արդարացրեց ինչ-որ չափով: Բայց որքա՞ն կարող է արտերկրյա պայմաններում գոյատեւել հայությունը: Լոսանջելեսյան որեւէ հայկական թերթի կամ հեռուստատեսային ծրագրի դիտողների կամ ընթերցողների 90 տոկոսը 50-60-անց մարդիկ են: Հայկական մասնավոր դպրոցների 11.000 երեխաներ կան Լոս Անջելեսում, որոնցից 11-ը հայ գրքի ընթերցող դուրս չի գալիս: Ճիշտ է՝ ավելի արդյունավետ է կիրակնօրյա դպրոցների գործունեությունը, երբ Հայաստանից գնացած ուսուցիչներն իրենց գործի մասնագետներն են, բայց դա բավարար չէ:

- Սփյուռքում մշակութային գործունեությամբ եք զբաղվում. «Եղիցի լույս» հանդեսի հրատարակիչ-խմբագիր, «Սփյուռք» մշակութային հասարակական կազմակերպության հիմնադիր, «Ծաղրանք դատավարություն՝ Տեր Գեւորգյանի» փաստավավերագրական ֆիլմի սցենարի հեղինակ եւ համադրողուսեր:

- 1996-98-ին եղել եմ «Եղիցի լույս» մշակութային ամսագրի հրատարակիչ-խմբագիր: Մի հանդեսում փորձում էինք խաչաձեւել թե՛ գեղարվեստական խոսք, թե՛ հրապարակախոսություն, թե՛ հոգեւոր հարցեր, թե՛ ընթացիկ իրադարձությունների լրատվություն, վերլուծություն, այդ ամենը կապված «Բնազանցություն» ժողովածուն, որ ընդգրկում է բանաստեղծությունների հայաստանյան եւ լոսանջելեսյան շարքերը: Չեր ներքին կեցությունը զարմանալիորեն անփոփոխ է աշխարհագրական որեւէ հորիզոնականում՝ կոշի բանից Լոս Անջելես-Լաս-Վեգասները: Ի՞նչից է դա:

- Նույնիսկ հարաբերականության տեսությունը բանաձեւ է, նույնիսկ ազատությունն կոչվածը բանաձեւ է: Ամեն տիրույթ ունի իր սարուկտուրաները, հիերարխիաների իր կառույցները, որտեղ կա հիերարխիա, այնտեղ կա բռնություն: Որպես հոգեւոր էություններ, երկրային կյանքում մենք կարծես բեմ ենք ելնում ու մոռանում ենք, որ դեր ենք խաղում ու խաղում ենք շատ դաժան, թեեւ որոշակի ծրագիր կա մարդու համար: Որտեղ էլ լինի մարդը՝ ԱՄՆ, Կանադա, Ֆրանսիա, թե այլուր, ճանաչողությունն է նրա գերագույն առաքելությունն ու նպատակը, իմացականությունն է նրա հոգեւոր բարերջման հիմքը: Մարդու ոդիսականը սա է՝ ճանաչել իրեն: Մարդը երկակի գոյություն է: Նրա կեցությունը եւ էությունն իրարից խախտված, հեռացած են: Եվ մարդը փորձում է մասնիկից դառնալ ալիք եւ գնալ դեպի Լույսը, կարճել իր կեցության եւ էության միջեւ ստեղծված վիհը եւ այսկերպ էանալ, հավերժանալ:

- Հաճախ եք կրկնում, թե երկրագնդի վրա դրախտ չկա, եւ արեւմտյան ափերն էլ շատ գայթակղիչ չեն: Արդյոք չունե՞ք Հայաստան վերադարձի մտադրություն:

- Անշուշտ, վերադարձի մտադրություն միշտ կա: Սակայն կարեւորն ինչպես է, սեփական գործունեության սահմանը որոշելը, աշխարհայացքային, ներդրումային ոլորտը ճշտելը, ստեղծել կեցության հարմարություններ՝ առանց բեռ դառնալու:

Հարցազրույցը վարեց
ՄԵԼԱՆՅԱ ԲԱԳԱԼՅԱՆԸ

Միջազգային

«Պետք չէ անդադար կրկնել, թե Աբխազիայի հայերը կռվել են վրացիների, Վրաստանի դեմ»

Հայը եւ հայը բարիկաղի տարբեր կողմերում, պատերազմից տասը տարի անց

Առաջին աբխարհամարտի տարիներին ամերիկացի սենատոր Հիրամ Ջոնսոնն ասել է. «Պատերազմի առաջին զոհը ճշմարտությունն է»:

Աբխազիայի պատերազմը, որ ձգվեց մեկ տարուց փոքր ավելի (1992 թ. օգոստոսի 14-ից 1993 թ. սեպտեմբերի 30), խլեց ավելի քան 8.000 մարդու կյանք եւ պատճառ դարձավ մոտ 200.000 փախստականների: Ողբերգությունը բաժին ընկավ բազմազգ Վրաստանի ժողովուրդների, այդ թվում՝ վիրահայության եւ աբխազահայության վրա:

«Ազգի» թղթակիցը երեք թղթակցություններով (երկուսը Աբխազիայից, մեկը Վրաստանից) կանդրադառնա Աբխազիայի պատերազմի «հայկական շերտադրությանը», ավելի պարզ՝ վիրահայության եւ աբխազահայության դերին, ինչը նվազ ուսումնասիրված թեմա է եւ, ցավոք, վրացական մամուլում ներկայացվում է բացառապես սեւ ու սպիտակ գույներով:

Մենք հավակնություն չունենք փրկելու պատերազմի առաջին զոհին՝ ճշմարտությունը, սակայն կփորձենք ողբերգության մեջ գտնել այլ գույներ եւ լինել անաչառ:

Այժմ անդամալույծ Գեորգի Ղարդարիշվիլին Աբխազիայի պատերազմի ժամանակ, ընդամենը 26 տարեկանում, վրացական զորքերի գլխավոր հրամանատարն էր, իսկ մեկ տարի անց՝ 27 տարեկանում, նշանակվեց Վրաստանի պաշտպանության նախարար՝ գեներալի կոչումով:

Հարցնում եմ. «Ինչպե՞ս էին կռվում հայերը: Նոր եմ վերադարձել Աբխազիայից, աբխազական կողմն ասում է, որ իրենց կողմից հայերը լավ են կռվել, օրինակ՝ «Բաղրամյանի գումարտակը»:

Պատասխանում է.«Հարցն այդպես չի դրվել. Վրաստանի հայերը կռվում են Աբխազիայի դեմ, կամ՝ աբխազահայերը կռվում են Վրաստանի կամ Վրաստանի հայերի դեմ: Այդ պատերազմն ուներ այլ արմատներ՝ անջատողականության արմատներ, որոնք Վրաստանում չէին ցանվել»:

Թբիլիսիում հաստատված Աբխազիայի վարչանդի կառավարության ղեկավար Թամազ Նադարեիշվիլին ասում է. «Պետք չէ անդադար կրկնել, թե Աբխազիայի հայերը կռվել են վրացիների, Վրաստանի դեմ»:

«ԽՍՀՄ փլուզումը, Վրաստանի անկախացումը, «Վրաստանը միայն վրացիներին» ու նմանօրինակ կարգախոսներ այլ ազգություններին, որոնք մեզ հետ ապրում էին Աբխազիայում, զգուշավոր դարձրեցին: Այդ էր պատճառը, որ նրանք անցան աբխազների կողմը: Ցավոք, Վրաստանի կողմից սխալներ թույլ տրվեցին: Հույները, հրեաները, ռուսները, հայերի մի մասը հեռացան: Երբ սկսվեցին ռազմական գործողությունները, շատ հայեր նաեւ մեր կողմից էին կռվում, ինչպես Սմբատ Սահակյանը (Աբխազիայի Նախարարների խորհրդի նախագահի տեղակալ), որը գնդակահարվեց: Ես կարող եմ շատ հայերի թվարկել, որոնք աջակցում էին Վրաստանին», ասում է Նադարեիշվիլին:

Վրացական մամուլում, հասարակության մեջ տիրապետող է այն տեսակետը, թե պատերազմի տարիներին Աբխազիայի հայերը կռվում էին Վրաստանի դեմ, Վրաստանի հայերը չէին կռվում Աբխազիայի դեմ, իսկ աբխազահայերից ծնավորված «Բաղրամյանի գումարտակը» վճռորոշ դեր է ունեցել պատերազմում՝ հօգուտ Աբխազիայի հաղթանակի:

«Դժվարանում եմ ասել, թե վրացական զորքերի կազմում որքան հայ քաղաքացիներ են մասնակցել պատերազմին: Կարող եմ ասել, որ շատ էին: Թբիլիսիի զինվորական ուսումնարանում շատ հայեր էին սովորում, նրանցից շատ-շատերը արժանապատվորեն կռվում էին հանուն Վրաստանի տարածքային ամբողջականության պահպանման, ընդդեմ անջատողականության: Մեր կողմից շատ հայեր սպանվեցին, մի մասը գերվեց», ասում է Ղարդարիշվիլին:

«Եթե այսօր որեւէ մեկը փորձի դժգոհել, թե ինչու Վրաստանի հայության մեծամասնությունը չկանգնեց վրացիների կողքին, ապա առաջին հերթին ես դժգոհելու առիթ ունեմ վրացիներից, որոնք չկանգնեցին վրացիների կողքին: Գալիի (Աբխազիա), Զուգդիդի շրջանի վրացիները, բոլոր զվիադիականները չմասնակցեցին պատերազմին, քանի որ նրանք դեմ էին Շեւարդնաձեի իշխանությանը: Անգամ նրանք ողջունեցին չեչեն գրոհայինների մուտքը Աբխազիա, որոնք կռվում էին վրացական զորքերի դեմ», ասում է Նադարեիշվիլին:

Վրաց հասարակության մեջ տիրապետող է մեկ այլ տեսակետ՝ աբխազահայերը, «Բաղրամյանի գումարտակը» անասելի դաժանություններ են գործել Աբխազիայի վրացի խաղաղ բնակչության նկատմամբ՝ կտանջներին են ենթարկել, կենդանի այրել, բռնաբարել:

Աբխազական կողմը, մասնավորապես «Բաղրամյանի գումարտակի» մարտիկները, որոնց վրացական կողմն անվանում է գրոհայիններ, ավազակներ, կտրականապես հերքում են եւ նմանօրինակ դաժանությունների մեջ մեղադրում Զաբա Իոսելիանիի, Թենգիզ Կիտովանիի գրոհայիններին:

«Աբխազիայի հայ բնակչությունը գաղափարապես պատրաստված էր լինելու աբխազ անջատողականների կողքին, դեմ էր Վրաստանի ինքնիշխանությանը եւ կողմ ԽՍՀՄ-ի պահպանմանը: Այո՛, «Բաղրամյանի գումարտակ» եղել է, մեզ հայտնի են այդ գրոհայինների ազգանունները», ասում է Նադարեիշվիլին եւ ավելացնում, որ Վրաստանի տարածքային ամբողջականությունը վերականգնելուց հետո նրանք, որոնք «դաժանություններ են գործել, պետք է պատիժ կրեն»:

«Ցավոք, ինքը՝ պատերազմը, կապված է արյան, մահվան հետ: Բայց պատերազմում գործում է չգրված մեկ օրենք՝ բարոյականության կոդեքսը: Այն խոսակցությունները, որոնք հասնում էին Թբիլիսի, պատիվ չեն բերում «Բաղրամյանի գումարտակի» մարտիկներին: Նրանք անցնում էին թույլատրելի սահմանը՝ կտանջներ, ծաղրուծանակ, բռնաբարություն, արնախմություն, ինչը չէր գեղեցկացնում ռազմական գործողությունները», ասում է Ղարդարիշվիլին:

Ամբողջ պատերազմի ընթացքում Աբխազիայի մեծ մասը՝ Գալիից մինչեւ Սուխում ներառյալ, գտնվում էր վրացական զինված ուժերի վերահսկողության տակ: Պատերազմական գործողությունները ծավալվում էին բացառապես Աբխազիայի (մասնավորապես՝ հայերով բնակեցված շրջաններում) տարածքում:

«Դաժանություններ հավանաբար եղել են նաեւ վրացական կողմից: Չեմ բացառում: Եղել են ալան-թալան, դիակառչության դեպքեր: Կային վրացական զինված խմբավորումներ, որոնք վերահսկելի չէին: Եթե Վրաստանն ուժեղ պետություն լիներ, ալան-թալանի, դիակառչության դեպքեր թույլ չէր տա, եւ Աբխազիայի հայերը չէին լինի աբխազների հետ մեր դեմ պատերազմում: Ուզում եմ ասել նաեւ հետեւյալը. Գագրայում հայերն իրենց տներում փրկել են վրացիների կյանքը», ասում է Ղարդարիշվիլին:

«Վրացական զորքերի հետ Աբխազիա մտան նաեւ ավազակներ, որոնք օգտագործելով պահը, սկսեցին թալանը: Այնպես էր ստացվել, որ ճանապարհին հայկական գյուղեր էին, եւ նրանք թալանում էին հայերին: Այդ ավազակները թալանում էին վրացական, էստոնական, մյուս գյուղերը», ասում է Նադարեիշվիլին:

Սոխումում, Գագրայում, Աբխազիայի այլ բնակավայրերում այսօր մնացել են փոքր քանակությամբ վրացիներ: Երբ օր մենք հյուրընկալվեցինք վրացի Ջիկիաների ընտանիքում: Տանտիկինը՝ Լեյլա Ջիկիան, ասաց, որ նախ վրացիները թալանում էին աբխազներին, վրացիներին, հայերին եւ ում պատահի, ապա, երբ վրացական զորքերը պարտվեցին եւ հեռացան, թալանը շարունակեցին աբխազները:

«Նրանք մտնում էին լքված վրացական պտղատու այգիները եւ խնձոր հավաքելու համար կտրում խնձորի ծառը», ասում է նա:

Ազգությամբ աբխազ Յուրա եւ Զաուր Անտիա եղբայրները պատերազմում կորցրել են իրենց մյուս եղբայրներին, այժմ կերակրում են ինը մանուկ որբերի:

«Վրացիներն ունեին բոլոր հնարավորությունները՝ զենք, տեխնիկա, մարդկային ուժ գրավելու Աբխազիան, բայց պարտվեցին, քանի որ թալանելու էին եկել: Առաջին հերթին թալանում էին հայերին: Եթե ազգանունդ «յան»-ով է վերջանում, ուրեմն ունես փող, ոսկի, հարստություն: Մենք՝ աբխազներս, ո՞ւր էինք: Սարերում, լեռներում էինք, հետո իջանք քաղաք», ասում է Յուրան:

Իր սայլակին գամված Գեորգի Ղարդարիշվիլին Աբխազիայի պատերազմն անվանում է սեւ էջ, ողբերգություն: Թեեւ Աբխազիայի պատերազմում ինքն է եղել վրացական զորքերի գլխավոր հրամանատարը, ասում է, որ դեմ է եղել Աբխազիայի պատերազմին:

«Այդ օրերը պատիվ չեն բերում հայ-վրացական, վրաց-աբխազական հարաբերություններին: Դրանք մեր օրերի սեւ էջերն էին: Երեւի եկել է ժամանակը, որ մենք՝ պատերազմի վետերաններս, ջնջենք այդ սեւ էջերը ու մեր ժողովուրդների համար ապահովենք խաղաղ կյանք, բարգավաճում», ասում է Ղարդարիշվիլին:

ԹԱԹՈՒԼ ՎԱՐՈՒԺԱՆ

Սուխում-Թբիլիսի

ԱՆՇՈՒՇԱՌԱ

Ֆրանսիան կողմ է Իրաքի ինքնիշխանությանը, ԱՄՆ-ը՝ ոչ

Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակը կիրակի օրը «Նյու Յորք թայմս» թերթին տված հարցազրույցում առաջարկել էր Իրաքին ինքնիշխանություն տալու երկփուլ ծրագիր, հասկացնելով, որ Ֆրանսիան պատրաստ է հավանություն տալ համանման քայլ նախաստեղծ ՄԱԿ-ի բանաձեւի նախագծին:

Այդ կապակցությամբ ԱՄՆ նախագահի ազգային անվտանգության գծով խորհրդական Կոնդոլիզա Ռայսը Ռոյթեր գործակալությանը հայտարարել է, որ իշխանությունը կարճ ժամանակամիջոցում Իրաքի ժամանակավոր կառավարությանը հանձնելու Ֆրանսիայի ծրագիրը պարզապես անիրագործելի է:

Ժակ Շիրակի առաջարկած ծրագրով նախատեսվում է, որ առաջին փուլում ԱՄՆ-ը խորհրդանշական կերպով Իրաքի ինքնիշխանությունը հանձնի այդ երկրի ժամանակավոր կառավարության 25 անդամներին: Երկրորդ փուլում, որը կարող էր տեւել 6-9 ամիս, իրաքցի նախարարները կստանային իշխանության իրական լիազորություններ:

Ռոյթերը հաղորդում է, որ նախագահ Ջորջ Բուշը հանդիպում է ունեցել Իրաքի ժամանակավոր կառավարման խորհրդի երկու անդամների հետ, որոնք ասել են, թե դեռ չափազանց վաղ է իրաքցիներին ինքնակառավարում տրամադրելու համար: Բուշը մտադրվել է ամերիկյան կառավարության մերժողական դիրքորոշումը հաստատել նաեւ երեքշաբթի սկսված ՄԱԿ-ի ընդհանուր ժողովի նստաշրջանում:

Բուշի վարկանիշն աննախադեպ չափով ընկել է

Ամերիկացիների շրջանում անցկացված վերջին հարցումները վկայում են, որ նախագահ Ջորջ Բուշի գործունեությանը հավանություն տվողների թիվն ամենացածր մակարդակի վրա է 2001 թ. հունվարից՝ նրա պաշտոնակալությունից ի վեր:

CNN հեռուստաընկերության, «Յու էս էյ թուդեյ» թերթի եւ «Գելաթ» հաստատության համատեղ անցկացրած հարցման տվյալները ցույց են տալիս, որ ներկայումս ամերիկացիների ընդամենը 50 տոկոսն է գոհ Բուշի աշխատանքից: Այն տարվա ապրիլին Բուշի գործունեությանը հավանություն էր տվել ամերիկացիների 71 տոկոսը, օգոստոսին՝ 59 տոկոսը:

CNN-ի վերլուծաբան Քիթին Հոլանդի կարծիքով, նախագահի ժողովրդականության աննախադեպ անկումը կապված է վերջերս Կոնգրեսին նրա ուղղած այն խնդրանքի հետ, որ 87 միլիարդ դոլար հատկացվի Իրաքում հակահաբեկչական պայքարին: Հոլանդի խոսքերով, մարդիկ «նախագահի շուրջն ավելի համաչափով համախմբվում են թշնամու դեմ զորք ուղարկելու, քան իրենց բանկային հաշիվներին դիպչելու դեպքում»:

Հարցման մասնակիցների 48 տոկոսը դժգոհ է Իրաքի պատերազմից: Մինչդեռ հակաիրաքյան ռազմարշավի սկզբում՝ ապրիլին պատերազմին կողմ էր ամերիկացիների 79 տոկոսը: Վերջին հարցումը վկայում է, որ բնակչության 89 տոկոսը Իրաքի պատերազմն ավարտված չի համարում:

Թեեւ հարցման մասնակիցների 59 տոկոսի կարծիքով Բուշն ունի իսկական նախագահին վայել հատկանիշներ, 51 տոկոսը սխալ է համարում նրա ընդունած որոշումներից շատերը:

ՆԱՏՕ-ի նոր գլխավոր քարտուղար է նշանակվել Հոլանդիայի արտգործնախարարը

ՆԱՏՕ-ի խորհուրդը դաշինքի նոր գլխավոր քարտուղար է նշանակել Հոլանդիայի արտգործնախարար Յաապ դե Հոոպ Շեֆերին: Հյուսիսատլանտյան դաշինքի ինստիտուտային էջում նշվում է, որ նրա պաշտոնակալությունը տեղի կունենա 2004 թ. հունվարի 1-ին՝ ներկայիս գլխավոր քարտուղար Ջորջ Ռոբերտսոնի լիազորությունների ժամկետի ավարտից հետո:

55-ամյա Յաապ դե Հոոպ Շեֆերը կրթությամբ իրավաբան է, 25 տարուց ավելի պաշտոններ է զբաղեցնում Հոլանդիայի ԱԳՆ-ում: Անցյալ տարվա հուլիսից երկրի արտգործնախարարն է:

Ջորջ Ռոբերտսոնը ողջունել է ՆԱՏՕ-ի խորհրդի որոշումը, ասելով, որ դիվանագիտական աշխատանքի ընթացքում դե Հոոպ Շեֆերը լավ ծանոթացել է դաշինքի խնդիրներին: Միաժամանակ նա նշել է, որ նոր գլխավոր քարտուղարը պետք է արմատական բարեփոխումներ իրականացնի ՆԱՏՕ-ն միջազգային անվտանգության նոր պայմաններին համապատասխանեցնելու նպատակով:

ՄԱԳԱՏԷ-ի փորձագետները շուտով կայցելեն Իրան

Ատոմային էներգիայի միջազգային գործակալությունում (ՄԱԳԱՏԷ) Իրանի ներկայացուցիչ Ալի Ասքար Սալեհին երկրի հանրային հեռուստատեսությանը տված հարցազրույցում հայտարարել է, որ ՄԱԳԱՏԷ-ի իրավաբանական փորձագետները շուտով Իրան կայցելեն: Նպատակը Միջուկային զենքը չտարածելու պայմանագրի հավելյալ արձանագրության ստորագրումն է:

Ֆրանսպրեսը մանրամասնում է, որ հավելյալ արձանագրությունը ՄԱԳԱՏԷ-ին հնարավորություն է տալիս անակնկալ այցելություններ կատարել որեւէ երկրի միջուկային կայաններ:

Իրանցի պաշտոնյան նշել է, որ հավելյալ արձանագրությունը փաստորեն «միջամտություն է երկրների ներքին գործերին»: Այդուհանդերձ, միջուկային զենքը չտարածելու պայմանագրի մասնակից երկրները վաղ թե ուշ ստիպված են ստորագրել հավելյալ արձանագրությունը, քանի որ դա անխուսափելի է:

Տվյալ արձանագրության ստորագրմանը կողմ է արտահայտվել նաեւ Իրանի փոխարտգործնախարար Մոհսեն Ամինզադեհը, որը նախագահ Մոհամմադ Խաթամիի մերձավորներից է:

Փոխարտգործնախարարի խոսքերով, Իրանը չի ձգտում ատոմային ռումբ ստեղծել, ուստի արձանագրության ստորագրումը համապատասխանում է Իրանի շահերին:

Սեպտեմբերի 12-ին ՄԱԳԱՏԷ-ն ԱՄՆ-ի եւ Եվրամիության հավանությամբ Թեհրանին վերջնագիր էր ներկայացրել, պահանջելով մինչեւ հոկտեմբերի 31-ը երաշխիքներ ներկայացնել, որ միջուկային խաղաղ ծրագիրը չի օգտագործվել ատոմային ռումբ ստեղծելու նպատակով: Իրանից մասնավորապես պահանջվում է դադարեցնել ուրանի հարստացման գործողությունները:

Պ. Ք.

Մշակույթ

Ազգակերտման երակը կենդանի պահողը

«...Կուզեմ, որ «Կեդրոնականը» զօրաւոր հարազատութիւն մը ըլլայ։ Ես դպրոցներէն կը սպասեմ ազգին փրկութիւնը»։ Ներսես Պատրիարք Վարժապետեանի այս խոսքերը հաստատումն են այն բանի, որ հայկական սփյուռքի առաջին սերունդների նվիրյալ ուսուցիչների ջանքերով, իսկապես, իրագործվեց ազգակերտումը։

«Այդ սերունդի ուսուցիչներուն հաւատքն ու տեսիլքն էր, որ հոսանքն ի վեր թիավարեց, ոգիով մը՝ որ գերիվեր էր նիւթական պայմաններէն...», հայակերտման եւ մանկավարժության հարաբերության շուրջն իր մտորումների մեջ այսպես է խոսում սփյուռքահայ հայտնի մանկավարժ-գրող Պեպո Սիմոնյանը։ Վերջինիս եւ բոլոր նրանց, ովքեր մտահոգված են ազգակերտման ճակատագրով, կա այն մտավախությունը, որ «կրթական մշակներու ուսուցչական առաքելությունը հետզհետէ ժամանակի եւ պայմաններուն ճնշումին տակ մաշումի ենթակայ կը մնայ...» (Պ. Սիմոնյան, «Հայակերտում եւ մանկավարժություն», 1996, էջ 161)։

Իհարկե, փոխվել են ժամանակները, սակայն արդյոք անցյալի գի՞րկն է անցել մանկավարժ-մտավորականների առաջին սերունդների հոգեբանությունը, որոնք ազգակերտումն իրականացրին Եղեռնից մազապուրծ գաղթականների բեկորներից։

Անցյալը չի կլանել նրանց հոգեբանությունը, քանի որ ազգակերտման երակը կենդանի պահողները դեռեւս իրար են փոխանցում այն՝ զգալով ինքնահոսի քողնելու վտանգավորությունը նաեւ ներկա ժամանակներում։

Այդպես է սկզբնավորվել նաեւ Սամբուլում գործող «Կեդրոնականի զօրաւոր հարազատութիւնը»՝ սկսած այն օրերից, երբ հայակերտումն այստեղ իրենց մաշկի վրա էին զգում դեռեւս Սիսաք Մեծարենցը, Վահան Թեքեյանը, Արշակ Չոպանյանը, Արշակ Ալպոյաճյանը, Հայկ Բերբերյանը, Հրաչյա Աճառյանը, Նիկողայոս Սարաֆյանը, Երուխանը, Լեւոն Զավեն Սուրմելյանը եւ շատ ուրիշներ։ Ուրեմն սա այն վարժարանն է, որի շրջանավարտները կարող են մի ամբողջ ազգ ներկայացնել։ Ուրեմն, որքան ծանր ու պատասխանատու է այն բեռը, որ այսօր դրված է Կեդրոնականի երիտասարդ տնօրենուհու՝ օրիորդ Սիլվա Գույումճյանի ուսերին։ Այդ դերի, եւ այն միասնաբար ու պատվով կրողների մասին պատմող բազմաթիվ էջեր ունի վարժարանի «Լուսատու» հանդեսը, որ նաեւ սփյուռքի գրական-մշակութային-կրթական կյանքը ներկայացնող առաջին սերունդների պատմությունն է, հայեցի դաստիարակության մի հրաշալի բուրաստան։ Այստեղ նաեւ վարժարանով անցնող սերունդների գրական առաջին թոթովանքներն են, հրաշալի բանաստեղծություններ՝ փայլուն ոգեղենով։ Այդ ամենի հետեւում, իհարկե, վարժարանի մանկավարժներն են, հայոց լեզվի եւ գրականության ուսուցիչները, ինչպես նաեւ հայաշունչ թարմությամբ մշտապես լեցուն տնօրենուհին։ Ամասիայից Սամբուլ եկած ծնողների դուստրը՝ օրիորդ Սիլվան, որ Եսայան վարժարանի շրջանավարտ է, այնուհետեւ ուսանել է Սամբուլի պետական համալսարանի տարաբանության բաժնում, բայց ուսուցչուհի դառնալու սերը սիրել է նրան հետեւելու նաեւ մանկավարժական դասընթացների։ Քիմիկոս, գրականասեր եւ մանկավարժ տնօրենուհին հարգանքով է հիշում իր ուսումնասիրությունների մեջ հոգեւոր մթնոլորտ ստեղծած իր ուսուցիչներին՝ Հերմինե Գալստյանին, Հայկանուշ Հաքցեյանին, Շահան Շահնուրին, Վարդ Շիկահերին, Աննա Գավաֆյանին եւ մյուսներին, որոնք ջանք չեն խնայել սեր արթնացնելու մայրենի լեզվի, գրականության եւ գիտության հանդեպ։

Ժամանակները փոխվել են, եւ գիտությունը մայրենիի հետ զուգահեռելու կարիքը հետզհետե մեծանում է։ Հայության առաջադիմության սերնդի շուրջն ունեցած Սիլվա Գույումճյանի մտորումների առաջացյալ այսօր վարժարանի մուտքից մինչեւ վերնահարկում գտնվող իրողությունն է՝ մարզանքի դահլիճը, իրենց մարքությամբ ու սարքավորումներով աչք շոյող դասարաններ, յուրօրինակ թանգարանի վերածված դահլիճը եւ, իհարկե, աշակերտները՝ գեղեցիկ ու խոհուն աչքերով։

Եվ եթե քեզ հնարավորություն չընձեռվեր իմանալու մի այլ ճանապարհով, այս նշանավոր վարժարանի համեստ տնօրենուհին երբեք չէր ասի, թե ինքը նաեւ տաղանդավոր թարգմանչուհի է։ Սիլվա Գույումճյանը թուրք ընթերցողին է ներկայացրել Կեդրոնականի մեկ այլ տաղանդավոր աշակերտ՝ հայ գյուղագրության փայլուն ներկայացուցիչ Հակոբ Մնձուրու երկու գրքերը՝ «Արմտան» եւ «Տեղեր, ուր ես եղել եմ»։

Կրթական հաստատության հոգսերը, գրական-թարգմանչական աշխատանքները, հայկական հիշատակներ կենդանացնող գրական երեկոներն ու այլ միջոցառումներ ... Հոյարտանալ է պետք այս հայուհով։ Ընդունել միայն իբրեւ կրթարանի հայաշունչ մթնոլորտի առանցքը, ինչ-որ բան թերի եւ իր տեղում չի լինի։ Մի զորավոր հարազատություն կար նրա մեջ, որ պարուրել էր ինձ, երբ դուրս էի գալիս վարժարանից, ծոցատետրիս մեջ Ներսես Պատրիարքի խոսքերը. «Կուզեմ, որ «Կեդրոնականը» զօրաւոր հարազատութիւն մը ըլլայ»։

Ծոցատետրից զատ, հիշողությանս մեջ տարա օրիորդ Սիլվայի ձայնը, որ ելեւէջվում է իմ ներսում մինչ այսօր՝ առավել հարթելով նրա հետ հարազատության իմ ճանապարհը. «Մեզ նիւթականը չի հետաքրքրեր, այլ՝ հոգեկանը...»։

ՓԵԼԻՔՍ ԲԱԽՇԻՆՅԱՆ

Կ. Պոլիս-Երեւան

«Հովեր» երգչախմբի համերգներ Մեծ Բրիտանիայում

«Բրիտիշ էուրեյզն» ու նրա գործընկեր «Բրիտիշ մեդիտերանյըն էուրեյզը» հանձն են առել հովանավորել Հայաստանի «Հովեր» կամերային երգչախմբի 10-օրյա համերգային շրջագայությունը Մեծ Բրիտանիայի տարբեր քաղաքներում։ Շրջագայությունն արդեն իսկ սկսված է եւ հաջողությամբ ընթանում է Գլազգոյի, Էդինբուրգի, Քեմբրիջի, Օքսֆորդի եւ Լոնդոնի հրաշակերտ տաճարներում, մատուռներում եւ համալսարանների դահլիճներում։ Արդեն լայն ճանաչման հասած եւ միջազգային մի շարք մրցանակների արժանացած 25 հոգուց բաղկացած երգչախումբը հիշյալ քաղաքներում կատարում է հայկական եւ արեւմտյան ինչպես հոգեւոր, այնպես էլ դասական ու ժողովրդական երաժշտական ստեղծագործություններ։

«Իսկապես հիշարժան համերգների շարք է, ոգեւորիչ թե ունկնդիրների, թե երգչախմբի անդամների համար, որոնք 19-35 տարեկան երաժիշտներ են, մի մասը՝ Երեւանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայում դեռեւս սովորող ուսանողներ», ասում է «Հովերի» վարչական տնօրեն Ռոդա Մանուկը։ «Համերգաշարը ծառայում է հայկական երաժշտությանը բրիտանացի երաժշտասերներին ծանոթացնելու գործին ու հույս՝ ունենք, որ ճանապարհ է հարթելու բրիտանական երգչախմբերի փոխադարձաբար Հայաստան այցելությանը», ավելացնում է նա։ Նրա ասելով, նախատեսված է «Էդինբուրգի համալսարանի վերածննդի երգիչների», «Հայկական ինստիտուտի» եւ «Գլազգոյի համալսարանի» հետ հետագա հասարակական միջոցառումների կազմակերպում։

«Հովերի» համերգային շրջագայության հովանավորումը մաս է կազմում «Բրիտիշ էուրեյզ» ավիաընկերության երեւանյան գրասենյակի քաղաքականությանը՝ աջակցել կամ հովանավորել Հայաստանում մշակութային ու մարդասիրական ձեռնարկումներին, նպաստել արվեստագետների փոխայցելություններին։

Ընկերությունը A 320 «էրբաս» ինքնաթիռներով շաբաթական 3 անգամ ուղիղ չվերթեր է իրականացնում Լոնդոնի ու Երեւանի միջեւ, ապահովելով նաեւ Լոնդոնի «Հիթրոու» օդակայանից դեպի աշխարհի 550 ուղղություններով չվերթերը։

«ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԱՎԻԱՈՒՂԻՆԵՐԻ» ԵՐԵՎԱՆՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ՈՒՂԻՂ ԳՐԻՉ

Հոգսերի խաշոցը

Եթե փողն ու իշխանությունն ամեն ինչ են, ապա դրանց տիրապետած թագավորներն ինչո՞ւ էին դիմում քրմերի, սրբերի, իմաստունների, ասպագուշակների խորհուրդներին՝ նրանց համար չխնայելով ոչ փող, ոչ էլ իշխելու հնարավորություն։

Դատատուի աշխատավարձն այնքան ցածր է, որ ֆինանսական փոխհատուցում չես պահանջում, երբ ուրիշը դաս է քաղում քո սխալներից։

Ժլատ կինը հավատարիմ է լինում, քանի որ ինքն այդպիսին է հանուն ամուսնու եւ նրա երեխաների։ Անբախտնդորեն չար մարդը չար է՝ հօգուտ իր վնասի։

Կինն ավելի քիչ է սիրում տղամարդու ուժը, ավելի շատ՝ նրա թուլությունն իր կանացիության նկատմամբ։ Դու միայն այն չես, ում վրա ուժդ պատում է, այլեւ այն, որի վրա պատում է ուրիշի ուժը։

Խաղն առավել հաճելի է, երբ գիտես քո հակառակորդի խաղաթղթերը, եւ նա չգիտի, որ դու գիտես։

Պատշտոնը մեզանում թագադրում է՝ հետագայում գոնե նազիր-վեզիր մնալու հույսով, եթե հընթացս բախտը չժպտա։

Բախտը ժպտում է, երբ նրան խուսուս ես տալիս... Երբ մոտը խեղկատակի նման ծամածռվում ու սրամտում ես... Երբ նրա նախկին ժպիտների շնորհիվ նրա ատամներն ես հաշվել... Երբ համբուրում ես նրա ժպտուն շուրթերն ու ուռած թշերը կամ ձեռքիդ բաց չես թողնում նրա այտը շոյելու առիթը... Երբ ուսումնասիրած ես լինում նրա աչքերի արտահայտությունը, երբ ժպտում էր... Երբ երկար հետամուտ ես լինում նրա կանացիությանը... Երբ նրա չժպտալու դեպքում հաշվի ես նստում նրա անբախտ ազգականների ծուռ ժպիտների հետ... Երբ նրա ժպիտի լուսավոր շողերով պայծառացնում ես քո մերձավորների հոգին... Երբ չես նախանձում ուրիշներին հասցեագրված նրա ժպիտների համար... Նրա ժպիտը չես վերագրում քո առանձնաշնորհյալ հմայքին... Երբ դա համարում ես քո աստղի ժպտուն արտացոլումը... Երբ այդ ժպիտը ծոխացնում ես անձնականորեն եւ օտարների համար... Երբ գլուխդ չես կորցնում նրա ժպիտին սիրահարվելուց...

Յուրաքանչյուրն իր գույնն է սիրում. մնում է, որ սիրեն մեկ-մեկու, որպեսզի բացվի բոլորի իրոք՝ ծիածանը։

Շքանշանը շատ է, որի տակ հետը նշանված մարդը հանգստանում է։

Այլը հառում են երկնքին՝ լավ եղանակի ակնկալությամբ։ Այլը հառում են հողին՝ հետո նրանից վերցնելու համար լավ եղանակի օգուտները։ Աստված հաշվի նստեց Հոբ երանելու առարկությունների հետ, հրեշտակները՝ կանանց դիտողությունների հետ իրենց իրավունքների մասին։ Քեզ հալածող յուրաքանչյուր Սավղոսի մեջ տես եթե ոչ վաղվա Պողոս Առաքյալին, այլ գոնե Մանասեին։ Եթե սխալվես, դա կլինի այն սխալը, որ քո օգտին է աշխատում։

Հետը լուսանկարվելով կամ առանց լուսանկարվելու՝ մեծ մարդու հետ առնչվում են սիրուց կամ գործնական օգուտից, հետաքրքրությունից թե մոդայից, հետը մեծանալու հույսով թե պատրանքով, ուրիշների մոտ պարծենալու համար, նրա ստեղծագործության հիմնոգին հնազանդ, կամ համեմատելու համար նրա կեցվածքն ու վարքագիծը նրա ստեղծագործության հետ։

Մարդկության տրված մեծագույն զորակցություններից մեկը անառակ որդու առակի խորհուրդն է։ Միայն աստվածային սերն ու ողորմածությունը կարող էին այդպես զորավիգ լինել մեղապարտներին։ Իվան Գրոզնին որդուն սպանեց։ Սալիերը հրաժարվեց գերի ընկած իր որդուց, ինչպես եւ մինչեւ վերջ ոխ պահեց մագդալինավարի մոլորված հարազատ մոր նկատմամբ։

Դու կարող էիր լինել քո հակառակորդի տեղը. էլ ի՞նչ տարբերություն քո եւ նրա միջեւ։ Դու եւ նա ստեղծված էիք միմյանց փոխարինելու համար։ Քո իսկական պարտությունը ոչ թե քո մահն է, այլ քո մահվան դատապարտելի տեսակը։ Քո կյանքը նրանով է քեզ հետաքրքրական, որ դու այն չգիտես։ Քո կյանքը նրանով է ծանծրալի, որ փոխել չես կարող։

Քո նախանձով մի համեմիր հակառակորդիդ հաղթանակը։

Ծաղիկը, կանաչին չորացնում են, որ թառամելուց աղբ չդառնա։ Նույն կերպ չորացրու քո համակրանքների արտահայտությունը։ Հոգին նույնպես մարզվում է մարմնի չար ու բարի գործողություններով։ Այդ մի բանն ավելի լավ են հասկացել չարագործությունը կազմակերպողները։

Երբ հոգսերը խշշում են, ապավինիր վերասլաց երաժշտությանը։

ՎԱՐՈՒԺԱՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Հովհաննես Թումանյանի «Անուշ» պոեմի նոր մեկնաբանությունը

Հովհաննես Թումանյանի «Անուշ» պոեմին տարբեր ժամանակներ, տարբեր արվեստագետներ են անդրադարձել։ Եվ ահա Նորարար փորձառական արվեստի կենտրոնը նախաձեռնել էր Սոնիա Պալասանյանի նոր մեկնաբանությունը՝ «Գուցե եղել է խելագար մի սիրտ...» խորագրով։

Սոնիա Պալասանյանն իր զգացմունքներով եւ երեւակայությամբ յուրօրինակ մեկնաբանություն է տվել պոեմին, հստակ ուշադրություն է դարձրել հայկական երաժշտությանը, նրա փոխներթափանցմանը ժամանակի ներկա զարկերակում։ Նրա պատկերացմամբ՝ «Անուշի վերացականությունն իմ ներաշխարհն է, իմ կին լինելն այս ժամանակաշրջանում, իմ հոգեկան աշխարհը։ Արուի ուժն էգի հանդեպ, որը համաշխարհային խնդիր է»։

Դիտելով «Անուշ» պոեմի նոր մեկնաբանությունը, ազատվում ես նախապես հայտնի կաղապարներից ու ընկնում առաջարկվող երեւակայական գիրկը։

Ներկայացման գեղարվեստական ղեկավարն է Գագիկ Ղազարեն։ Օգտագործված է եվա Խաչատրյանի եւ Սեւադա Պետրոսյանի ինքնուրույն երաժշտությունը։

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

ԹԱՂՐԱՆԿԱՐՅԻ ԱՉՔԵՐՈՎ

10-ամյա Սամվել Տեր-Սահակյանի փառահեղ նվաճումը

Ուերբիայի եւ Չեռնոգորիայի Բուդվա քաղաքում վերջնագիծը հասեց շախմատի Եվրոպայի պատանեկան առաջնությունը, որն անցկացվում էր տարիքային 5 խմբով: Ամենակրտսեր տարիքային խմբում գերազանց ելույթ ունեցավ 10-ամյա վանաձորցի շախմատիստ Սամվել Տեր-Սահակյանը, որն, ինչպես եւ սպասվում էր, նվաճեց Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը: Ավարտական տուրում էլ հայ պատանին վստահ խաղաց՝ սպիտակներով պարտության մատնելով ռուսաստանցի Վլադիմիր Բելոուսին: Սամվելը մրցաշարում հասավ գերազանց արդյունքի՝ 9 հնարավորից վաստակելով 8 միավոր (7 հաղթանակ, 2 ոչ-ոքի): Երկրորդ տեղը գրավեց ռուսաստանցի Սանան Սյուգիրովը (7,5 միավոր), որը հաղթեց գերմանացի Օլիվեր Միհոկին: Բրոնզե մրցանակակիր դարձավ ռուսաստանցի Գերման Բազեեւը:

Մրցանակակիր կարող էր դառնալ նաեւ մինչեւ 14 տարեկանների մրցաշարում հանդես եկած Զավեն Անդրեասյանը: Վերջին տուրից առաջ Զավենը 6,5 միավորով նորվեգացի Մագնուս Կառլսոնի հետ գլխավորում էր աղյուսակը: Ցավոք, ավարտական տուրում Զավենն անհաջող խաղաց, պարտվեց բելառուսցի Սերգեյ Զիգալկոյին եւ զրկվեց մրցանակային տեղից: Անդրեասյանը 6,5 միավորով գրավեց 4-րդ տեղը: Նույնքան միավոր ուներ նաեւ բրոնզե պարգեւին արժանացած նորվեգացի Մագնուս Կառլսենը, որը հայ շախմատիստին գերազանցեց գործակիցների աղյուսակով, թեեւ մրցաշարի ընթացքում պարտվել էր նրան: Զավենի նկատմամբ տարած հաղթանակը, փաստորեն, ոսկու արժեք ունեցավ բելառուսցի շախմատիստի համար, որը նվաճեց Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը: Այնպես որ, եթե այդ պարտիայում Զավենը հաղթեր, կամ նույնիսկ ոչ-ոքի խաղար, ապա ինքը կճանաչվեր ուժեղագույնը: Ցավալի է, իհարկե, որ պատանի շախմատիստը վերջում «սայթաքեց»: Արծաթե մեդալը 7 միավորով նվաճեց Տորնիկե Սանիկիձեն, որը չեմպիոնին զիջեց միայն գործակիցների աղյուսակով:

Մինչեւ 12 տարեկանների մրցավեճում չեմպիոն հռչակվեց Ադրբեջանը ներկայացնող Էլթայ Սաֆարլին՝ 7,5 միավոր, որն ուկրաինացի Վլադիմիր Օնիշչուկին շրջանցեց միայն գործակիցների աղյուսակի շնորհիվ: Տարիքային այս խմբում Հայաստանը ներկայացնող Հրայր Սիմոնյանը 6 միավորով զբաղեցրեց 8-րդ տեղը, իսկ Տիգրան Սիմոնյանը 5 միավորով 26-րդ տեղում է:

Աղջիկների մրցավեճում ըստ տարիքային խմբերի չեմպիոններ դարձան Նազի Պաիկիձեն՝ 8 միավոր (10 տարեկան), Անաստասիա Բոդնարուկը (Ռուսաստան)՝ 9 (12 տարեկան), Աննա Մուզիչուկը (Ուկրաինա)՝ 7,5 (14 տարեկան), Մարիա Ֆոմինյուկը (Ռուսաստան)՝ 7,5 (16 տարեկան) եւ Նատալի Պոգոնինան (Ռուսաստան)՝ 7,5 (18 տարեկան):

Հայաստանի ներկայացուցիչներից բոլորից հաջող հանդես եկավ մինչեւ 18 տարեկանների մրցավեճին մասնակցած Սիրանուշ Անդրեասյանը, որը 5 միավորով գրավեց 15-րդ տեղը: 4,5-ական միավոր վաստակեցին Անահիտ Խաչատյանը (22-րդ տեղ, մինչեւ 16 տարեկաններ) եւ Վարդուհի Քալաշյանը (24-րդ տեղ, մինչեւ 14 տարեկաններ): 4 միավոր (31-րդ տեղ) վաստակեց ամենակրտսեր մասնակիցը՝ Սոնա Բաղդասարյանը: Իսկ 12-ամյա Արուսյակ Քարհանյանը 2 միավորով 44-րդ տեղում է: Մրցաշարը մեկ անգամ եւս ցույց տվեց, որ Հայաստանի պատանի շախմատիստների շրջանում կան տաղանդավոր երեխաներ, որոնց մեծ ապագա է սպասվում:

Մրցաշարին մասնակցում էր 65 շախմատիստ:

Չեմպիոնի կոչման համար բավական համառ պայքար էր ծավալվել մինչեւ 16 տարեկան պատանիների միջեւ: Արդյունքում 3 շախմատիստներ՝ հունգարացի Չաբա Բալոգը, ադրբեջանցի Ռաուֆ Մամեդովն ու վրացի Դավիթ Մագալաշվիլին վաստակեցին հավասար՝ 7-ական միավոր: Գործակիցների աղյուսակի շնորհիվ նշված հերթականությամբ էլ նրանց բաժանվեցին ոսկե, արծաթե եւ բրոնզե մեդալներ: Սմբատ Բոթոյանը ցույց տվեց համեստ արդյունք (3 միավոր)՝ 54 շախմատիստների մեջ գրավելով 48-րդ տեղը:

Մինչեւ 18 տարեկան շախմատիստների մրցավեճում գերազանց արդյունքի հասավ Մաթեուս Բարթելը (Լեհաստան)՝ 8,5 միավոր: 4,5 միավորով Դավիթ Պետրոսյանը 29-րդ տեղում է:

Հայ սամբիստները մրցանակակիրների թվում են

Ռուսաստանի Ուրալսկ քաղաքում անցկացվում է սամբո ըմբշամարտի աշխարհի երիտասարդական եւ պատանեկան առաջնությունը: Առաջնության պարգեւները վիճարկողների թվում են նաեւ Հայաստանի սամբիստները, որոնք ավանդաբար հաջող են հանդես գալիս միջազգային մրցաշարերում: Հայաստանի մարզական պատվիրակության թվում են 12 սամբիստներ, որոնցից 7-ը մասնակցում են աշխարհի երիտասարդական առաջնությանը, 5-ը՝ պատանիների մրցավեճին: Արդեն ավարտվել են քաշային մի քանի կարգերում մրցումները եւ, հուրախություն հայ մարզասերների, մեր մարզիկներն արժանացել են պարգեւների: Այսպես, պատանիների մրցավեճում 48 կգ քաշային կարգում գյումրեցի Վահան Վարդանյանը հաղթելով իր բոլոր մրցակիցներին, ճանաչվեց աշխարհի չեմպիոն: Երիտասարդների մրցաշարում վանաձորցի Լաերտ Ավագյանն էլ գերազանց ելույթ ունեցավ: Նա հաղթող ճանաչվեց բոլոր չորս գոտեմարտերում էլ եւ կանգնեց պատվո պատվանդանի ամենավերին աստիճանին: Պատանիների մրցաշարում գյումրեցի Հովհաննես Մալխասյանը հաջողությամբ հաղթահարելով նախնական փուլերի արգելքները, մտավ եզրափակիչ, որտեղ զիջեց մրցակցին: Գյումրեցի սամբիստն արժանացավ արծաթե մեդալի:

Իսրայելցի մարզիկները հնարավոր է չմասնակցեն օլիմպիադային

Հունաստանի իշխանությունները մտադիր են արգելել օլիմպիադայի մասնակիցների անվտանգությունն ապահովող զինված ջոկատների մուտքը երկրի տարածք: Այս մասին հայտարարել է Հունաստանի ներքին գործերի նախարար Գեորգիոս Պլորիդիսը: Ըստ նրա, յուրաքանչյուր մարզական պատվիրակություն կարող է Աթենք ժամանել անվտանգության իր խմբի հետ, սակայն նրանք ոչ մի դեպքում չպետք է զինված լինեն: Պարզ է, որ դա առաջին հերթին վերաբերում է Իսրայելի օլիմպիական պատվիրակությանը: Այն բանից հետո, երբ 1972 թ. Մյունխենի օլիմպիադայի ժամանակ իսրայելական պատվիրակության նկատմամբ ահաբեկչություն իրականացվեց, Իսրայելի մարզիկներին արտասահմանյան մրցումների ժամանակ մշտապես ուղեկցում են անվտանգության աշխատակիցները, որոնք զինված են սեփական զենքով: Ըստ իսրայելական բարձրաստիճան մի պաշտոնյայի, իսրայելցիները վաղուց են հայտարարել, որ իրենց անվտանգության ապահովումը չի կարելի վստահել ոչ մեկին: Անցած ժամանակահատվածում դեռ չի եղել մի դեպք, որ Իսրայելի անվտանգության ծառայության աշխատակիցները մրցումների մեկնեն առանց սեփական զենքի: Մյունխենյան ողբերգությունից հետո իսրայելցիներն ամեն անգամ թույլտվություն են ստացել իրենց զենքով մուտք գործելու օլիմպիական մայրաքաղաք:

Ճիշտ է, Իսրայելի անվտանգության աշխատակիցներին նման արտոնություն տալը մյուս երկրների պատվիրակությունները խանդավառությամբ չեն ընդունում, սակայն ըմբռնումով են մոտենում: Եվ ամեն անգամ օլիմպիադայի կազմակերպիչներն իսրայելցիների հարցում բացառություն են անում: Օրինակ, Սիդնեյի օլիմպիադայում Ավստրալիայի անվտանգության աշխատակիցները արգելել էին իսրայելցիներին նույնիսկ զրահաբաճկոններով մուտք գործել երկիր: Սակայն երկարատեւ բանակցություններից հետո հարցը դրականորեն էր լուծվել: Ուստի այս անգամ էլ Իսրայելի օլիմպիական կոմիտեն հույս ունի, որ կթույլատրեն անվտանգության ծառայության զինված աշխատակիցների մուտքը Հունաստան: Օլիմպիական կոմիտեի ներկայացուցիչները մտադիր են այդ հարցով բանակցել Աթենքի իշխանությունների հետ: Եթե այս անգամ հարցը դրական լուծում չստանա, ապա Իսրայելի մարզիկները չեն մասնակցի օլիմպիական խաղերին:

Ռոմանցեւը գլխավորեց «Սատուրնը»

Մոսկվայի «Սպարտակից» հեռանալուց հետո Օլեգ Ռոմանցեւը շատ կարճ ժամանակամիջոց հայտնվեց գործազուրկի կարգավիճակում: Ինչպես ժողովրդական ասացվածքն է հուշում՝ տաքած քարը գետնին չի մնա: Եվ ահա Օլեգ Ռոմանցեւին առաջարկվեց ՌԴ առաջնության մասնակից Ռոստովսկոյեի «Սատուրնի» գլխավոր մարզչի պաշտոնը, որն ընդունվեց հմուտ մասնագետի կողմից:

Թիմի առջեւ դեռեւս մրցաշրջանի մեկնարկում խնդիր է դրվել եվրագավաթների մասնակցության իրավունք նվաճել: Եվ թեեւ ներկայում «Սատուրնը» 6-րդ տեղում է, այդ խնդիրը մնում է ուժի մեջ եւ ակումբի ղեկավարությունը հույս ունի Օլեգ Ռոմանցեւի շնորհիվ հասնել ցանկալի արդյունքի:

«Միլանը» բանակցում է Իբրահիմովիչի հարցով

Իտալական լրատվամիջոցների հաղորդագրությունների համաձայն, «Միլանն» «Այաքսի» հետ բանակցում է ձմռանը հոլանդական ակումբի շվեդ հարձակվող Զլատան Իբրահիմովիչին գնելու շուրջ: Իտալացիները վաղուց էին հետաքրքրվում երիտասարդ, տաղանդավոր ֆուտբոլիստով: Շվեդիայի հավաքականի հարձակվողի խաղը «Միլանի» ղեկավարությունը դիտեց հենց իտալացիների հետ «Այաքսի» հանդիպման ժամանակ: Հնարավոր է, որ 1/8 եզրափակիչ չմտնելու դեպքում «Այաքսը» համաձայնի վաճառել Իբրահիմովիչին: «Միլանի» ղեկավարությունն արդեն տեղեկացրել է, որ պատրաստ է նրա համար որոշակի կանխիկ գումար վճարել, ինչպես նաեւ «Այաքսին» տրամադրել հարձակվող Թոմասոնին:

Երկու ակումբների բանակցություններն, անշուշտ, պետք է անհանգստացնեն «Ռոմային», որի նախագահ Ֆրանկո Սենսին ողջ ամառը հայտարարում էր, որ վաղ թե ուշ Իբրահիմովիչը տեղափոխվելու է իրենց թիմ: Սենսիի համար մյուս անհաջողությունն այն էր, որ «Օսերի» հարձակվող Ջիբրիլ Սիսեն հրաժարվեց ամռանը տեղափոխվել Ադենինյան թերակղզի՝ նախընտրելով «Լիվերպուլը»: Ֆրանսիայի հավաքականի հարձակվողը, որի տրանսֆերային գինը 8 մլն ֆունտ ստեռլինգ է, «Ռոմայի» հնարավոր ձեռքբերումների ցանկում Իբրահիմովիչից հետո երկրորդն էր:

Դել Պիեռոյին նոր պայմանագիր կառաջարկվի

«Յուվենտուսի» ավագ Ալեսանդրո Դել Պիեռոն շուտով նոր պայմանագիր կկնքի ակումբի հետ: «Պինյուրիկյոն», ինչպես նրան անվանում են Իտալիայում, հայտարարել է, որ պայմանագրի կնքման հետ կապված հիմնահարցեր չեն ծագի: Ակումբի ղեկավարությունը մտադիր է Դել Պիեռոյի հետ պայմանագիր կնքել մինչեւ 2008 թ.՝ այն եւս մեկ տարով երկարաձգելու պայմանով: Ակումբում տարվող ֆինանսական նոր քաղաքականության համաձայն, «Յուվենտուսի» առանցքային ֆուտբոլիստին կառաջարկվի աշխատավարձի 20 տոկոսի կրճատում: Ներկայումս Դել Պիեռոն տարեկան 3,8 մլն ֆունտ է ստանում: Սակայն դժվար թե դա ազդի ֆուտբոլիստի եկամտի վրա, քանի որ ակումբը կարտունակի թույլատրել նրան գումարներ վաստակել գովազդային անձնական պայմանագրերից:

Դել Պիեռոն ծնվել է Կոնեյանո քաղաքում եւ առաջին երկու մրցաշրջաններն անցկացրել է «Պադովայում» (1991-1993 թթ.), որը հանդես էր գալիս «Բ» սերիայում: Այնուհետեւ նա տեղափոխվեց «Յուվենտուս», որի կազմում արդեն 10 մրցաշրջան է անցկացրել: Նոր մրցաշրջանից առաջ նա «Ա» սերիայի առաջնություններում, Իտալիայի գավաթի եւ եվրագավաթների խաղարկություններում ընդհանուր առմամբ «Ծեր սինյորայի» կազմում անցկացրել է 358 խաղ եւ խփել 139 գնդակ:

Տիդինկը թերեւս ընտրվի «Էյնդհովենի» նախագահ

Հոլանդական «Էյնդհովենի» գլխավոր մարզիչ Գուս Հիդինկը մտադիր է իր թեկնածությունն առաջադրել 2004 թ. ամռանը կայանալիք ակումբի նախագահի պաշտոնի համար անցկացվելիք ընտրություններում: Ակումբի ներկայիս նախագահ Հարի վան Ռայլին մտադիր չէ իր թեկնածությունն առաջադրել այդ ընտրություններում եւ հենց Հիդինկին է տեսնում որպես իրեն փոխարինող այդ պաշտոնում: Դրանում շահագրգռված է նաեւ ակումբի գլխավոր բաժնետեր «Ֆիլիպս» ֆիրման, որը պատրաստ է լրացուցիչ ներդրումներ կատարել: Միայն թե առայժմ պարզ չէ, թե նախագահի ընտրվելու դեպքում Հիդինկը կշարունակի՞ մարզչական իր գործունեությունը:

Խաղադաշտում կանայք են

ԱՄՆ-ի խաղադաշտերում ֆուտբոլի աշխարհի չեմպիոնի կոչումն են վիճարկում 16 ուժեղագույն կանանց հավաքականները: Նախապես ծրագրված էր, որ առաջնությունը պետք է կայանա ամռանը Չինաստանում, սակայն արտասովոր թոքաբորբի պատճառով մրցաշարը տեղափոխվեց ԱՄՆ: Որպես կատարված ծախսերի փոխհատուցում, ՖԻՖԱ-ն Չինաստանին 1 մլն դոլար կհատկացնի: Բացի այդ, Չինաստանին իրավունք է վերապահվել 2007 թ. իր մոտ կազմակերպել կանանց աշխարհի հերթական առաջնությունը:

Նախնական փուլում 16 հավաքականները բաժանվել են չորս խմբի: Մրցաշարը հաղթանակով սկսեցին աշխարհի ներկայիս չեմպիոնուհիները՝ ԱՄՆ-ի ֆուտբոլիստուհիները, որոնք պարտության մատնեցին շվեդուհիներին (3-1): Ամերիկուհիների կազմում բոլոր 3 գոլերի համահեղինակ դարձավ «Ոսկե գնդակի» դափնեկիր Միա Հեմը: Նույն խմբում հանդես եկող կԺԴՀ-ի հավաքականը 3-0 հաշվով հաղթեց Նիգերիայի ընտրանուն:

Հաջող մեկնարկեցին նաեւ բրազիլուհիները, որոնց կազմում ընդգրկված է Ռոնալդոյի կինը՝ Միլենա Դոմինգեսը: Կորեայի հավաքականի հետ խաղում բրազիլացի մարզուհիները 3 անպատասխան գնդակ խփեցին: «Բ» խմբում հանդես եկող աշխարհի 1995 թ. չեմպիոն Նորվեգիայի հավաքականը 2-0 հաշվով պարտության մատնեց ֆրանսուհիներին: Ամենախոշոր հաշիվը գրանցվեց «Գ» խմբում հանդես եկող Ճապոնիայի եւ Արգենտինայի հավաքականների մրցավեճում: «Ծագող արեւի» երկրի ներկայացուցիչները 6 անպատասխան գոլ խփեցին: Գերմանիա-Կանադա խաղն ավարտվեց գերմանուհիների հաղթանակով՝ 4-1: Ռուսաստանի հավաքականը համառ պայքարում առավելության հասավ Ավստրալիայի ընտրանու նկատմամբ (2-1): Չին ֆուտբոլիստուհիները 1-0 հաշվով պարտության մատնեցին Գանայի ընտրանուն:

Էջը պատրաստեց
ԱՇՈՏ ՀԱՅԲԱՊԵՏՅԱՆԸ

ՀԱՍԱՐԱԿ

Նախագծվել է աղագայի ինֆնաշարժի նախատիպը

ՓԱՐԻԶ, 23 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Համաշխարհային ավտոմոբիլաշինական արդյունաբերությունը հայտնվել է հեղաշրջիչ փոփոխությունների շեմին, երբ աշխարհի առաջատար ընկերությունների կոնսորցիումին հաջողվել է ստեղծել աղագայի ինֆնաշարժի նախատիպ: Գոյություն ունեցող մեքենաներից նրա գլխավոր տարբերությունը համակարգչային նորագույն տեխնոլոգիաների լայն օգտագործումն է:

Դրա հետեւանքով, ինչպես հաղորդում են այդ նախատիպին ծանոթացած գործարար աղբյուրները, ժամանակակից ինֆնաշարժի բազմաթիվ հանգույցներ դարձել են անհարկի, իսկ նա՝ ավելի անվտանգ, դյուրակառավարելի եւ հարմարավետ:

Ինֆնաշարժերի նոր սերունդը, որն ստացել է «Ֆլեքսոեյ» անվանումը, եւ մշակել է «Դայմլեր-Քրայսլեր», ԲՄՎ, «Ջեներալ մոտորս», «Ֆոլկսվագեն» ընկերությունների մասնագետների համատեղ խումբը, սովորական ղեկ չունի: Այն փոխարինված է կառավարման բռնակով, որը նման է համակարգչային խաղերում օգտագործվող բռնակներին: Մեքենայի հանգուցային տարրերը միավորված են համակարգչային ինտեգրալ համակարգով, որն իրականացնում է բոլոր հանգույցների աշխատանքի եւ ընթացքի լիակատար վերահսկողությունը:

Ինֆնաշարժի նախագծմանը մասնակցում են նաեւ «Մոտորոլա» եւ «Ֆիլիպս» էլեկտրոնային հսկաները: Սպասվում է, որ ընթացիկ տարվա վերջում նրանք կավարտեն նոր հզոր ստանդարտային միկրոչիպի ստեղծումը, որը կդառնա ինֆնաշարժերի նոր սերնդի «ուղեղը»: Նոր ինֆնաշարժը, փորձագետների հաշվարկներով, վաճառքի կհանվի մինչեւ 2012 թվականը:

Ոսկու գների զգալի աճ աշխարհի շուկաներում

ՓԱՐԻԶ, 23 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Աշխարհի շուկաներում շարունակվում է ոսկու գների կայուն աճը: Այսօր առավոտյան Եվրոպայի ոսկու բորսաներում 1 տրոյական ունցիայի դիմաց տալիս էին 387,55 դոլար: Սա ամենաբարձր գինն է վերջին գրեթե յոթ տարվա ընթացքում: Ոսկու պահանջարկի մեծացումն ուղեկցվում է ներդնողների կողմից ԱՄՆ-ի դոլարի զանգվածային սպառավաճառքով:

Մինչդեռ, ինչպես հաղորդում են իրազեկ աղբյուրներ, ոսկու գների աճը կարող էր առավել զգալի լինել, սակայն այն զսպվում է այն խորհրդապահական տեղեկատվությամբ, ըստ որի արեւմտյան յոթ առաջատար երկրների կենտրոնական բանկերը համաձայնեցրել են ոսկու վաճառքի վերաբերյալ հինգերորդ պլանը: Ըստ առկա տեղեկատվության, բանկերն իրենց պահուստներից տարեկան շուկա կհանեն մինչեւ 400 տոննա ոսկի:

ԿԲ խորհրդի նիստում

ԿԲ խորհրդի սեպտեմբերի 22-ի որոշմամբ սահմանվեցին ԿԲ գործառնությունների հետեւյալ տոկոսադրույքները. կնքվող ռեպո-համաձայնագրերի տոկոսադրույքը սահմանվեց տարեկան 9 տոկոս, տրամադրվող լոմբարդային վարկերինը՝ 20 տոկոս, իսկ ներգրավվող ավանդներինը՝ 5 տոկոս:

ՀՀ ԿԲ Մամուլի ծառայություն

Институт Открытого Общества
Фонд Содействия-Армения

Институт Открытого Общества Фонд Содействия Армения объявляет конкурс на подготовку и вещание цикла телепередач в форме ток-шоу по актуальным темам демократизации и социально-экономического развития Армении, таким как: становление гражданского общества, проблемы интеграции в международные структуры и открытости государственного управления и принятия решений, механизмы защиты основных прав и свобод граждан, проблемы уязвимых слоев населения и т. д.

Конкурс будет проводится на следующих условиях:

- Проект должен быть направлен на повышение информированности общества в вопросах развития страны, способствовать формированию диалога как между разными слоями общества, так и между обществом и государством в целом:
- Ток-шоу должны представлять разные взгляды на существующие проблемы, не носить пропагандистский характер и пользу тех или иных взглядов, партий, политических или общественных деятелей:
- Проект должен предусмотреть формирование и работу Общественного Совета, который будет наблюдать за обьективностью выполняемых работ:
- Цикл ток-шоу должен быть еженедельным и в целом содержать не менее 10 прайм-тайм выпусков:
- В конкурсе могут принять участие телеканалы, телекомпании и студии со статусом юридических лиц, а также их коалиции:
- В заявке должны быть представлены темы и конкретные вопросы обсуждения, а также имена дискутирующих сторон:
- Предпочтение будет отдано проекту, обеспечивающему максимальный охват по стране:
- Бюджет проекта не должен превышать 20.000 долларов США.

Форму заявки можно получить в офисе ИООФС-Армения по адресу: Ереван 375010, ул. Пушкина 1, кв. 2, а также через сайт: www.osi.am.
Документы принимаются до 24 октября 2003 г. включительно.

Институт Открытого Общества
Фонд Содействия-Армения

Институт Открытого Общества Фонд Содействия Армения объявляет конкурс проектов, направленных на изучение закономерностей, тенденций и перспектив формирования и развития политики и возможностей институциональной поддержки инициатив в областях образования, здравоохранения и местного самоуправления. Конкурс направлен на развитие деятельности центров формирования общественной политики (policy think tanks) с целью повышения их роли и развитии новой, более благоприятной среды для вовлечения общественности и решении проблем в выше перечисленных областях, а также в деле повышения информированности широких слоев общества. Проекты должны включить анализ и распространение передового международного опыта и способствовать сотрудничеству различных структур, работающих в данных областях.

В конкурсе могут принять участие ПНО, имеющие опыт работы в данных областях.

Время реализации проекта-один год.
Бюджет проекта не должен превышать 15.000 долларов США.
Форму заявки можно получить в офисе ИООФС-Армения по адресу: Ереван 375010, ул. Пушкина 1, кв. 2,
а также через сайт: www.osi.am.
Документы принимаются до 31 октября 2003 г. включительно.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Հայռուսգազարդ» ՓԲԸ-ն հայտարարում է մրցույթ հաշվապահական հաշվառման վարչության ներքոհիշյալ աշխատատեղերի համար՝

- առաջատար հաշվապահ.
- հարկային ռիսկայնության գնահատման գծով հաշվապահ:

Պարտադիր պահանջներ՝

- բարձրագույն հաշվապահական կամ ֆինանսատնտեսական կրթություն.
- առնվազն 3 տարվա հաշվապահական աշխատանքի փորձ.
- հաշվապահական հաշվառման ստանդարտների տիրապետում.
- համակարգչային հաշվապահական ծրագրով աշխատելու կարողություն.
- ռուսերեն լեզվի տիրապետում:

Ցանկալի պահանջներ

տարիք՝ 25-35
անգլերեն լեզվի իմացություն.
ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության կողմից տրված հաշվապահի որակավորման վկայական:

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթեր՝

ինքնակենսագրություն (CV).
բարձրագույն կրթության դիպլոմի պատճեն.
խղճամիտ աշխատանքային գրքույկից.
բնութագիր վերջին աշխատավայրից.
1 նկար:

Մրցույթի հաղթողների հետ աշխատանքային պայմանագիրը նախատեսվում է կնքել 01. 01. 2004 թ.:

Փաստաթղթերն ընդունվում են փակ ծրարով ս. թ. սեպտեմբերի 19-ից մինչեւ հոկտեմբերի 1-ը, ժամը 11-13-ը: Փաստաթղթերը ներկայացնել «Հայռուսգազարդ» ՓԲԸ հաշվապահական հաշվառման վարչություն, Երեւան, Թբիլիսյան խճուղի 43, 2-րդ հարկ:

ՀՀ Կենտրոնական բանկը 24.09.2003 թ. ժ. 9:00-ից սահմանում է արտարժույթի հետեւյալ հաշվարկային փոխարժեքները ու գնման եւ վաճառքի հետեւյալ գները

ISO-ի կոդը	Միավոր	Արտարժույթ	Հաշվարկային փոխարժեք	Գնում	Վաճառք
USD	1	ԱՄՆ դոլար	571.20	565.50	576.90
EUR	1	եվրո	654.82	650.90	658.80
RUR	1	ռուս. ռուբլի	18.73	17.60	19.90

AMERICAN FULBRIGHT PROGRAM

The Public Affairs Section of the Embassy of the United States of America is pleased to announce the annual competition for **Fulbright Scholarships** in the United States for the 2004_2005 academic year.

FULBRIGHT

"The Fulbright Program aims to bring a little more knowledge, a little more reason, and a little more compassion into world affairs and thereby to increase the chance that nations will learn at least to live in peace and friendship".

J. William Fulbright

The Fulbright Visiting Scholar Program awards grants to foreign scholars to lecture and/or conduct post-doctoral research at U.S. universities for an academic year or term. The Fulbright Program was named after Senator J. William Fulbright from Arkansas, who proposed the program in 1946 "to increase mutual understanding between the people of the U.S. and the people of other countries". All grants are approved by the Fulbright Foreign Scholarship Board (12 members), which is appointed by the President of the United States.

BASIC REQUIREMENTS FOR THE SCHOLARSHIP

- Armenian citizenship
- Evidence of employment in the Republic of Armenia
- Ph.D.
- Proficiency in English
- Completed application package
- References
- Good health and physical condition

ELIGIBLE FIELDS ARE:

- Political Science, Economics, Social Science
- International Relations, Journalism and Law
- American Studies (History, Literature, Society and Culture of the United States)
- Chemistry, Public Health and Medicine

APPLICATION PROCEDURE AND COMPETITION SCHEDULE

Applications (hard copy) must be submitted in English. Handwritten, incomplete and late applications will not be considered. Recipients of Fulbright scholarship within the past 5 years will not be considered. All applications, including references, undergo technical and academic reviews. Candidates who satisfy all requirements will be interviewed by the Embassy Fulbright Selection Committee. The Committee will submit the names of the finalists to the Fulbright Board of Foreign Scholarships in the United States by December 15, 2003, for final approval. Selected grantees will be notified of final approval when their affiliations at U.S. universities are confirmed in April 2004.

- Applications may be obtained from the Public Affairs Office of the U.S. Embassy in Yerevan or downloaded from the Embassy web site: http://www.usa.am. Completed applications must be submitted to Anahit Khachatryan, Cultural Affairs Assistant, Public Affairs Office, U.S. Embassy, at 52-46-61 or 52-70-01, ext: 4477, who may also be contacted for more information about the scholarship.

FREQUENTLY ASKED QUESTIONS

- How strict are the deadlines? Deadlines are firm.
- If I was not successful in previous competitions, can I apply again? Yes.
- What are the selection criteria? The following factors are considered: professional qualifications, project proposal (quality, feasibility), how the acquired knowledge will be used upon return, English language competence, need for the project to be undertaken in the United States, personal qualifications, quality of references. Preference will be given to candidates with little or no previous experience in the United States.
- What are the basic benefits? Round trip airfare, monthly stipend, book allowance, and settling in allowance.
- Can family members accompany? Yes, but you will be financially responsible for them.
- Do I have to arrange university affiliation in the United States? It is recommended that you submit a letter of invitation from a U.S. university in your application package. If you don't know where your project can be accomplished, the affiliation will be arranged by one of the Fulbright administering agencies.
- Should I mail references together with the application package? Referrers should fax directly to the Public Affairs Office of the U.S. Embassy, or enclose the letters in separate sealed envelopes in the application package.

Deadline for submission: October 31, 2003.

..... ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեր թերթում անվճար հայտարարություններ հրապարակելու ցանկություն ունեցողներին խնդրում ենք դրանք գրավոր ներկայացնել խմբագրության տնօրենությանը: Հասցեն՝ Հանրապետության 47:

- Վաճառվում է Ս. Խորենացու 3-րդ նրբ., տուն 17. բնակելի 2 սենյակ. 33,2 քմ. օժանդակ կառույց՝ 32 քմ. առանց միջնորդի: Գինը՝ պայմանագրային: Հեռ.՝ 63-88-93:
- Կգնեմ PETROF 115 մոդելի դաշնամուր: Հեռ.՝ 533051:
- Տրվում է վարձով 2 սենյականոց շեղ նորոգված եւ կահավորված բնակարան Կոմիտաս թաղամասում: Վարձը՝ 180 դոլար: Հեռ.՝ 23-35-04:
- Վաճառվում է հողատարածք (հարմար է արտադրության համար) 1200 քմ, հասցեն՝ Նորագավիթ, 4-րդ փ. 30 տուն: Տուն՝ 4 սենյ., 1 հարկում, լողավազանով, ծառերով, ավտոտնակով: Հեռ.՝ 54-21-94, 8-98 (էդիկ)
- Վաճառվում է նոր տուփայով «Չայկա» կարի մեքենա էլ. շարժիչով: Գինը՝ 100 դոլար: BMW-520 ավտոմեքենայի հետնամասի պահեստամասեր շաս էժան գնով: Հեռ.՝ 53-36-07:
- Վաճառվում է 2 սենյականոց բնակարան Մարդան փողոցում, 9/5 հարկ, արեւկող, մաքուր, չբնակեցված, առանց միջնորդի: Նախնական գինը՝ 23.000 դոլար: Հեռ.՝ 63-70-69:
- Բուժում եմ մակերային հիվանդություններ՝ փսորիազ, նեյրոդերմիտ, այրվածքներ եւ այլն, նաեւ շարահարս: Հեռ.՝ 27-44-28 (աշխ.). Գալինա:
- Փնտրում եմ հովանավորներ իմ բանաստեղծությունների հրատարակման եւ իրացման համար: Բանաստեղծությունների ժանրը լիրիկական է: Ունեմ 2 ժողովածու՝ «Անմոռաց երգեր» եւ «Երգեր ու երազներ»: Հեռ.՝ 77-78-05, Հայկ Դիլբարյան:

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիւ 65. Դասիլ 69150. Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 23. 9. 2003 Գինը՝ 100 դրամ